2200	02	0	0		ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող2210+2220+տող2230+տող2240+տող2250)	830.0	830.0
2220	02	2	0		Քաղաքացիական պաշտպանություն, որից՝	480.0	480.0
2221	02	2	1		Քաղաքացիական պաշտպանություն	480.0	480.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	80.0	80.0
				4241	-Մասնագիտական ծառայություններ	400.0	400.0
2250	02	5	0		Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝	350.0	350.0
2251	02	5	1		Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	350.0	350.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	350.0	350.0
2300	03	0	0		ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող2310+տող2320+տող2330+տող2340+տող2350+տող2360+տող2370)	800.0	800.0
2320	03	2	0		Փրկարար ծառայություն, որից՝	800.0	800.0
2321	03	2	1		Փրկարար ծառայություն	800.0	800.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	100.0	100.0
				4842	-Այլ բնական պատճառներով ստացած վնասվածքների վերականգնում	700.0	700.0
2400	04	0	0		ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝(տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450+տող2460+ տող2470+տող2480+տող2490)	67,861.3	15,300.0

Տողի NN	Բա- ժին	Խու- մք	Դաս	Սինթե- տիկ հաշիվ	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ ք	
							վարչական մաս	
1	2	3	4	5	6	7	8	
2450	04	5	0		<i>Տրանսպորտ, որից՝</i>	83,361.3	15,300.0	
2451	04	5	1		ճանապարհային տրանսպորտ	83,361.3	15,300.0	
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	0.0	0.0	
				4251	-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	15,300.0	15,300.0	
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	68,061.3	0.0	
2480	04	8	0		<i>Տնտեսական հարաբերությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ, որից՝</i>	2,500.0	0.0	
	04	8	5		Տրանսպորտի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	2,500.0	0.0	
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				5134	- Նախագծահետազոտական ծախսեր	2,500.0		
2490	04	9	0		<i>Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող), որից՝</i>	-18,000.0	0.0	
2491	04	9	1		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-18,000.0	0.0	
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
					Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-18,000.0		
2500	05	0	0		ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող2510+տող2520+տող2530+տող 2540+տող2550+տող2560)	104,307.4	95,767.4	
2510	05	1	0		<i>Աղբահանում, որից՝</i>	93,767.4	93,767.4	
2511	05	1	1		Աղբահանում	93,767.4	93,767.4	
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4213	-Կոմունալ ծառայություններ	3,000.0	3,000.0	
				4215	-Ապահովագրական ծախսեր	301.0	301.0	
				4511	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	86,866.4	86,866.4	
				4655	-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	3,600.0	3,600.0	
2520	05	2	0		<i>Կեղտաջրերի հեռացում, որից՝</i>	8,110.0	0.0	
2521	05	2	1		Կեղտաջրերի հեռացում	8,110.0	0.0	
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	3,260.0	0.0	
				5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	4,850.0	0.0	
2530	05	3	0		<i>Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար, որից՝</i>	0.0	0.0	
	05	5	0		Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ, որից՝	430.0	0.0	
	05	5	1		Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	430.0	0.0	

Տողի NN	Բա- ժին	Խու- մք	Դաս	Սինթե- տիկ հաշիվ	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ ք
							վարչական մաս
1	2	3	4	5	6	7	8
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				5134	- Նախագծահետազոտական ծախսեր	430.0	
2560	05	6	0		Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝	2,000.0	2,000.0
2561	05	6	1		Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	2,000.0	2,000.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0	
				4213	-Կոմունալ ծառայություններ	2,000.0	2,000.0
2600	06	0	0		ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650+տող3660)	94,715.7	39,331.4
2630	06	3	0		Ջրամատակարարում, որից՝	55,687.3	22,703.0
2631	06	3	1		Ջրամատակարարում	55,687.3	22,703.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4212	-Էներգետիկ ծառայություններ	15,067.0	15,067.0
				4511	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	3,966.0	3,966.0
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	32,984.3	
				4655	-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	3,670.0	3,670.0
2640	06	4	0		Փողոցների լուսավորում, որից՝	36,028.4	16,628.4
2641	06	4	1		Փողոցների լուսավորում	16,628.4	16,628.4
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4212	-Էներգետիկ ծառայություններ	11,550.0	11,550.0
				4511	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	5,078.4	5,078.4
				5112	- Շենքերի և շինությունների կառուցում	17,000.0	
				5221	- Նյութեր և պարագաներ	2,400.0	
2650	06	5	0		Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ, որից՝	3,000.0	0.0
2651	06	5	1		Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	3,000.0	0.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				5134	- Նախագծահետազոտական ծախսեր	3,000.0	
2700	07	0	0		ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող2710 +տող2720+տող2730+տող2740+տող2750+տող2760)	400.0	400.0
2760	07	6	0		Առողջապահություն (այլ դասերին չպատկանող), որից՝	400.0	400.0
2762	07	6	2		Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	400.0	400.0

Տողի NN	Բա- ժին	Խու- մք	Դաս	Սինթե- տիկ հաշիվ	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ ք
							վարչական մաս
1	2	3	4	5	6	7	8
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4638	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին	400.0	400.0
2800	08	0	0		ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ, այդ թվում՝ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860)	6,856.0	4,356.0
2810	08	1	0		Հանգստի և սպորտի ծառայություններ, որից՝	250.0	250.0
2811	08	1	1		Հանգստի և սպորտի ծառայություններ	250.0	250.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	250.0	250.0
2820	08	2	0		Մշակութային ծառայություններ, որից՝	3,156.0	3,156.0
2824	08	2	4		Այլ մշակութային կազմակերպություններ	3,156.0	3,156.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4216	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	200.0	200.0
				4239	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1,276.0	1,276.0
				4269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	980.0	980.0
				4639	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	700.0	700.0
2830	08	3	0		Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ, որից՝	250.0	250.0
2833	08	3	3		Տեղեկատվության ձեռքբերում	250.0	250.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4234	-Տեղակատվական ծառայություններ	250.0	250.0
2840	08	4	0		Կրոնական և հասարակական այլ ծառայություններ, որից՝	700.0	700.0
2842	08	4	2		Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	450.0	450.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4639	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	100.0	100.0
				4819	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	350.0	350.0
2843	08	4	3		Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	250.0	250.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4639	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	250.0	250.0
2850	08	5	0		Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ, որից՝	2,500.0	0.0
2851	08	5	1		Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	2,500.0	0.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0	
				5134	- Նախագծահետազոտական ծախսեր	2,500.0	

Տողի NN	Բա- ժին	Խու- մք	Դաս	Միևթե- տիկ հաշիվ	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ ք
							վարչական մաս
1	2	3	4	5	6	7	8
2900	09	0	0		ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+տող2970+տող2980)	49,533.1	44,533.1
2910	09	1	0		Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից՝	22,256.7	22,256.7
2911	09	1	1		Նախադպրոցական կրթություն	22,256.7	22,256.7
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4511	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	22,256.7	22,256.7
2920	09	2	0		Միջնակարգ ընդհանուր կրթություն, որից՝	2,350.0	2,350.0
2922	09	2	2		Միջնակարգ(ըրիվ) ընդհանուր կրթություն	2,350.0	2,350.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	1,250.0	1,250.0
				4269	-Հատուկ նպատակային այլ նյութեր	200.0	200.0
				4637	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	200.0	200.0
				4655	-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	700.0	700.0
2950	09	5	0		Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն, որից՝	19,926.4	19,926.4
2951	09	5	1		Արտադպրոցական դաստիարակություն	19,926.4	19,926.4
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4511	-Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	19,926.4	19,926.4
2970	09	7	0		Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ, որից՝	5,000.0	0.0
2971	09	7	1		Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ	5,000.0	0.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5,000.0	
3000	10	0	0		ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝ (տող3010+տող3020+տող3030+տող3040+տող3050+տող3060+տող3070+տող3080+տող3090)	3,210.0	3,210.0
3010	10	1	0		Վատառողջություն և անաշխատունակություն, որից՝	0.0	0.0
3030	10	3	0		Հարազատին կորցրած անձինք, որից՝	210.0	210.0
3031	10	3	1		Հարազատին կորցրած անձինք	210.0	210.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4726	-Հուղարկավորության նպաստներ բյուջեից	210.0	210.0
3040	10	4	0		Ընտանիքի անդամներ և զավակներ, որից՝	2,100.0	2,100.0
3041	10	4	1		Ընտանիքի անդամներ և զավակներ	2,100.0	2,100.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4729	-Այլ նպաստներ բյուջեից	2,100.0	2,100.0

Տողի NN	Բա- ժին	Խու- մք	Դաս	Սինթե- տիկ հաշիվ	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Ընդամենը (ս.7+ս.8)	այդ ք
							վարչական մաս
1	2	3	4	5	6	7	8
3070	10	7	0		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), որից՝	900.0	900.0
3071	10	7	1		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	900.0	900.0
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4729	-Այլ նպաստներ բյուջեից	900.0	900.0
3100	11	0	0		ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ, այդ թվում՝ (տող3110)	3,115.7	11,115.7
3110	11	1	0		ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ, որից՝	3,115.7	11,115.7
3112	11	1	2		ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	3,115.7	11,115.7
					այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		
				4891	-Պահուստային միջոցներ, այդ թվում՝	3,115.7	11,115.7
					համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ		8,000.0



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ. փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մարտի 2019 թվականի N 8-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԽՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի ԹԻՎ 7-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 30-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 37-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2015 թվականի մարտի 12-ի «Զրվեժ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին» N 7-Ն որոշումը:

կողմ (10)

դեմ (0)

ձեռնպահ (0)

ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2019 թ. մարտի 15
գ. Զրվեժ



ՌՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵՃ ՀԱՄԱՅՆՔԻ
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

2. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

**II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱԿՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԵՐԸ
(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)**

3. Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի կազմում ընդգրկված են Ջրվեժ, Ձորաղբյուր և Զովք բնակավայրերը:

4. Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղ՝

1) Գտնվում է Կոտայքի մարզի հարավային մասում, սահմանակից է Երևան քաղաքի երեք վարչական՝ Նոր-Նորք, Ավան-Առինջ, Էրեբունի շրջաններին և մարզի երեք գյուղերի՝ Առինջ, Ձորաղբյուր, Ողջաբերդ վարչական տարածքներին: Մարզկենտրոնից գտնվում է 45 կմ հեռավորության վրա, Արուսյան քաղաքից՝ 9 կմ: Այստեղով են անցնում Երևան-Գառնի մայրուղին և Արուսյան-Մասիս ավտոճանապարհը:

2) Ջրվեժ տեղանունը հիշատակվում է դեռևս V դարում՝ պատմաբան Ղազար Փարպեցու, VII դարում՝ սարկավագ Զաքարյա Քանաքեռցու աշխատություններում: Ջրվեժ գյուղը պատմականորեն ձևավորված բնակավայր է: Այն հիշատակվում է V դարից: Այդ մասին են վկայում գյուղին բնորոշ նեղլիկ, ծուռումուռ փողոցները և մեկ-երկու հարկանի ցածրահարկ բնակելի կառուցապատումը: Պատմական տեղեկությունների համաձայն Ջրվեժ տեղանունը ոչ մի անգամ չի վերանվանվել: Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1380 մետր, վարչական տարածքը կազմում է 1851,02 հա, որից տնամերձ՝ 198,67 հա, աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ:

3) Տարվա եղանակներից համեմատաբար լավ է զարուհը, ամառը տևական է՝ 4,5-5 ամիս: Տարեկան տեղումների քանակը կազմում է 250-ից 350 մմ, վերջին տարիներին նկատվում է տևական ձնածածկույթի սակավություն և կարկտահարություն: Գյուղը գտնվում է Արարատյան հարթավայրի հյուսիս-արևելյան մասի նախալեռնային գոտում, չունի հարթ մակերես: Հյուսիսային մասում այն կտրտված է ձորակներով, արևելյան մասից սկիզբ են առնում Ձորաղբյուրի և Ողջաբերդի լեռնաբազուկները, հարավային մասում խոր ձորակներ են, որոնք շարունակվում են մինչև Արին-Բերդ, արևմտյան կողմով՝ ձորերով և կիրճերով միանում են Երևանին:

4) Դեռևս խորհրդային տարիներին գյուղին կից տեղակայվել են արտադրական ձեռնարկություններ, որոնց շուրջ կազմավորվել է խոշոր բնակելի բնավանդ՝ իր ենթակառուցվածքներով (դպրոց, մանկապարտեզ, խանութներ և այլն): Թեև վերը նշված տարածքները այսօր համայնքի վարչական տարածքի մեջ չեն, դրանք համայնքում կենտրոնական դիրք են գրավում, կարևոր տեղ զբաղեցնելով բնակավայրի կենսագործունեության մեջ:

5) Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Գառնի-Գեղարդ ավտոճանապարհը, որը ճյուղավորվելով նաև դեպի Աբովյան տանող ռելեհանգիոն նշանակություն ունեցող տարածքներ, ծառայում է որպես կարևոր զբոսաշրջային առանցք: Գառնու ուղղությամբ է գտնվում համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի «Ջրվեժ» անտառապարկի տարածքը: Ձբաղեցնելով տարանցիկ դիրք՝ Ջրվեժ համայնքի տարածքը կարևոր դեր է խաղում Երևանի ագրոմելիորացիայի կազմավորման և փոխկապակցված զարգացման տեսանկյունից: Ներկայումս այն երկայնական և լայնական ուղղություններով ձգված, անկանոն ձևի տարածված հատակագծային կառուցվածքով մի բնակավայր է:

6) Ջրվեժում ներկայումս գործում են «Ջրվեժ» մսամթերքի կոմբինատը, «Գամմա» պահածոների գործարանը, բետոնի հանգույցը, քարի մշակման և այլ արտադրամասեր: Գյուղին հարակից Երևանի «Ջրվեժ-Բանավան» և «Մայակ» թաղամասերում ժամանակին տեղակայվել են խոշոր արտադրական ձեռնարկություններ, որոնց նախկին հզորություններն ու տարածքներն այսօր մասնակի են օգտագործվում:

7) 1970-1980 թվականներին Ջրվեժի հյուսիս-արևելյան մասում տարբեր կազմակերպությունների տրամադրվեցին այգեգործական ընկերությունների հողամասեր, որոնք այսօր բավականին մեծ զանգված են կազմում և ընդգրկված են համայնքի սահմաններում՝ որպես բնակավայրի հողեր: Վերջին տարիներին Երևան-Գառնի ավտոխճուղու երկու կողմերում արագ տեմպերով կառուցվում են զվարճանքի և հասարակական սննդի բազմապիսի օբյեկտներ (հյուրանոցներ, ռեստորաններ, հարսանյաց հանդեսների սրահներ և այլն): Բնակավայրը, համայնքի տարածքում հողերի սակավության պատճառով, ներկայումս զարգանում է հիմնականում նախկին գյուղատնտեսական հողերի հաշվին:

8) Բնակավայրում գործում են միջնակարգ դպրոցը, երաժշտական դպրոցը, համայնքապետարանը, ամբուլատորիան, սպորտ դպրոցը, եկեղեցին:

5. Զովեժ համայնքի Ձորաղբյուր գյուղ՝

1) Սահմանակից է Երևան քաղաքին և մարզի 6 գյուղերի վարչական տարածքներին: Այստեղով են անցնում Երևան-Ջովջ-Մայակովսկի և Աբովյան-Գառնի ճանապարհները: Գյուղի ներկայիս բնակչության նախնիները գաղթել են Պարսկաստանի Խոյ և Սալմաստ գավառներից 1828 թվականին: Նախնիներն գյուղը կոչվել է Տաճարապատ, հետո Թեժրաբեկ, այժմ՝ Ձորաղբյուր:

2) Գյուղի վարչական տարածքը կազմում է 2692,3 հա, ծովի մակերևույթից բարձր է 1530 մ: Գյուղի աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ անբարենպաստ: Տարվա եղանակներից համեմատաբար լավ է գարունը, ամռանը՝ տաք, առանց տեղումների: Տարեկան տեղումները քիչ են, վերջին տարիներին նկատվում է, որ ձյուն քիչ է գալիս: Լինում է նաև կարկտահարություն:

3) Տեղանքի ռելիեֆը ունի հիմնականում միջին կտրտվածություն: Զգալի տարածքներ են զբաղեցնում ձորակային՝ թեք հարթությունները, ինչպես նաև լվացված մերկ լանջերը: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման գործում կարևոր մասնակցություն են ունեցել վերին երրորդական և չորրորդական ժամանակահատվածի անդեզիտա բազալտները, տուֆային լավաները: Մայր ապարները ներկայացված են խճա-բեկորային էյուվիալ և էյուվիալ-դեյուվիալ կարբոնատային ավազակավերը: Այս նստվածքների հզորությունը, կախված ռելիեֆի ձևից, հիմնականում չի գերազանցում 0.5-1.5 մ-ից:

4) Բնակավայրի կառուցապատումը որոշ մասերում անկանոն է: Համայնքի վարչական տարածքի 2 հատվածներում գոյություն ունեն այգեգործական հողեր, որոնց կառուցապատումը կանոնավոր է: Բնակավայրի միջնամասում են գտնվում միջնակարգ դպրոցը, վարչական ղեկավարի նստավայրը, ամբուլատորիան և մանկապարտեզը: Գյուղում կա նաև մարզական բազա:

5) Բնակավայրի դիրքը նպաստավոր է հանգստի գոտու ստեղծման և սպասարկման համար, ինչը կարող է խթան հանդիսանալ նաև հանգստի՝ տուրիզմի զարգացման համար:

6. Զովեժ համայնքի Զովջ գյուղ՝

1) Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի արևմտյան ստորոտում, Կոտայքի մարզի վարչական տարածքի հարավ-արևմտյան հատվածում: Զովջ գյուղի վարչական տարածքը կազմում է 947,23 հա: Զովջ գյուղը հարավից սահմանակից է Ձորաղբյուր գյուղին և Կյուսիսից՝ Գեղաշեն գյուղին: Զովջը որպես բնակավայր շատ հին է, ինչի մասին վկայում են գյուղատեղիում և նրա շրջակայքում եղած հնությունները՝ ավերված բերդի մնացորդները:

2) Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1670մ բարձրության վրա, տարեկան միջին ջերմաստիճանը մաքսիմում +30+36°C, մինիմումը՝ -20-25°C: Տարեկան տեղումների միջին քանակը 200-400մմ: Լինում են նաև չորային տարիներ: Զուրը գալիս է Գեղամա լեռներից բխող սառնորակ աղբյուրներից՝ Չարքազից: Ամեն մի հանդագոտի ունի իր ուրույն բուսատեսակները՝ սկսած կիսաանապատայինից մինչև ալպիականը:

3) Ձուվք գյուղում գործում է Գ.Շահինյանի անվան միջնակարգ դպրոցը, ոչ մասնագիտացված խանութներ, հանդիսությունների սրահ, վարչական դեկավայրի նստավայրը: Գյուղի վարչական տարածքում է գտնվում նաև «Չանախ» պանրի արտադրության գործարանը:

4) Բնակավայրի տարածքում գոյություն ունեն՝ հացաթխման արտադրամասեր, անասնապահական ֆերմաներ և այլ արտադրամասեր: Բնակելի տները հիմնականում 1-2 հարկանի են: Բնակավայրը ճանապարհներով կապված է Կամարիս և Ձորաղբյուր գյուղերի հետ:

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

7. Կոտայքի մարզի բնակավայրերը հարուստ են պատմամշակութային ժառանգությամբ, որը խթան է հանդիսանում մարզում զբոսաշրջության և ռեկրեացիոն գոտիները առավել զարգացնելու համար:

8. **Ջրվեժ գյուղի** շրջակայքում հայտնաբերվել են մի շարք պատմական հուշարձաններ: Կատարված պեղումներով (1957-1962 թ.թ.) Քոսաղբյուր կոչված վայրում և գերեզմանոցում բացվել են միջնադարյան ճարտարապետական երկու՝ Քոսաղբյուր վայրի և գերեզմանատան համալիրները: Քոսաղբյուրի համալիրի կազմում են՝ սրբատաշ դարչնագույն տուֆից կառուցված VI-VII դ.դ. խաչաձև գմբեթավոր եկեղեցին, հարավից նրան կից XII-XIII դ.դ. միանավ թաղածածկ եկեղեցին և երկու փոքր մատուռ: Պահպանվել են հուշարձանախմբի պատերի ստորին շարքերը և քանդակազարդ բեկորները: Գերեզմանատան IV-V դ.դ. հուշահամալիրը բաղկացած է եկեղեցուց, կոթողից և դամբարանից: Եկեղեցին միանավ է, կառուցված է տեղական սև և կարմիր գույնի սրբատաշ տուֆից:

9. Ջրվեժի տարածքում գտնվում են գմբեթավոր սրահի ավերակներ, մատուռներ, խաչքարեր: Ուշագրավ են Խաչատուրի տապանաքարը և խաչքարը:

10. 1679 թվականին Հայաստանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժը հիմնովին ավերում է բոլոր շինությունները, ինչպես նաև եկեղեցիները և վանքերը, այդ թվում նաև Ջրվեժի եկեղեցին: Երկրաշարժից հետո Ջրվեժը 212 տարի եկեղեցի չի ունեցել և միայն 1891 թվականին, գյուղի բնակչությունը քանդված եկեղեցու տեղում կառուցում է նորը, որը վերաբացվել է 1991 թվականին և ներկայումս գործում է որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Կոտայքի թեմի Ջրվեժի Սուրբ Կաթողիկե Առաքելական եկեղեցի:



Ջրվեժի Սուրբ Կաթողիկե եկեղեցի



Խաչքարեր 16-17-րդ դ.դ.՝ տեղադրված եկեղեցու բակում



«Խաչատուրի հուշարձանը»՝ Զրվեժ գյուղում



Հուշարձան կոթող՝

**նվիրված Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակին, տեղադրված
Ջրվեժի միջնակարգ դպրոցի բակում**



Սպարապետ Վազգեն Սարգսյանի հիշատակը հավերժացնող կիսանդրի, տեղադրված Ջրվեժի միջնակարգ դպրոցի բակում




Հուշարձան կոթող և խաչքար՝

**նվիրված Հայրենական Մեծ պատերազմի զոհերի և Արցախյան պատերազմում զոհված
ազատամարտիկների հիշատակին, տեղադրված Ջրվեժ գյուղում**

11. **Ձորաղբյուր գյուղի** տարածքում առկա են պատմամշակութային հուշարձաններ՝ ամրոց դամբարանադաշտեր, որոնք թվագրվում են ք.ա. II-I հազարամյակներին, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ 18-րդ դար, Սուրբ Խաչմատուռը՝ 13-րդ դար: Մեր ժամանակներում կառուցվել է Անմահ Ջինվորի հուշարձանը՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում զոհված Ձորաղբյուրցիների հիշատակին:



Ձորաղբյուրի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի



Հուշարձան կոթող

նվիրված Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին, տեղադրված Ձորաղբյուր գյուղում



Հուշաղբյուր՝ Ձորաղբյուր գյուղում

12. **Զուլք գյուղում** կան մի շարք պատմամշակութային հուշարձաններ, որոնցից են՝ 10-13 դ.դ. Ճգնավոր քարայր մատուռը, 1982 թվականին կառուցված հուշարձանը՝ նվիրված Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհվածների հիշատակին, 1948 թվականին կառուցված հուշաղբյուրը, Հայաստանում Քրիստոնեության 1700 ամյակին նվիրված խաչքարը և մշակույթի այլ հուշարձաններ:



Ծգնավոր քարայր մատուռ, Զուլք գյուղում



Հուշարձան կոթող

նվիրված Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին, տեղադրված Զովք գյուղում



Հուշաղբյուր՝ Զովք գյուղում



Խաչքար՝

Նվիրված Հայաստանում Քրիստոնեության 1700 ամյակին, տեղադրված Զովք գյուղում

13. Զրվեժ համայնքի երեք բնակավայրերի պատմամշակութային ժառանգությունը ներկայացված է՝ ստորև բերված Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման պետական ցանկից:

ՁՈՎՔ ԳՅՈՒՂ

1	2	3	4	5	6	7	8	9
1.				ԱՄՐՈՑ	գյուղի հվ-ամ կողմում, բլրի վրա		<	
	1.1			Դամբարանադաշտ	Ք.ա. 1 հազ.		<	
2.				ԱՄՐՈՑ	միջնադար	«Սարանիստ» գյուղատեղից 1.5 կմ աե	<	«Բերդի դռ» վայրում
3.				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	19-20 դդ.	գյուղի աե կողմում	S	
4.				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ		գյուղից աե, «Հայրույի դիք»բլրի վրա	<	
5.				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՍԱՐԱՆԻՍՏ»	12-20 դդ.		<	
	5.1			Գերեզմանոց	12-20 դդ.		<	
		5.1.1		Խաչքար	12-13 դդ.		<	վերնամասը
		5.1.2		Խաչքար	12-13 դդ.		<	ստորին մասը
		5.1.3		Խաչքար	12-13 դդ.		<	
		5.1.4		Խաչքար	12-13 դդ.		<	
		5.1.5		Խաչքար	12-13 դդ.		<	ստորին մասը
6.				ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1979 թ.	գյուղատեղիի հա եզրին	S	
7.				ԽԱՉՔԱՐ (ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉ)	9 դ.	գյուղի մեջ	<	Ռ. Մարտիրոսյանի տնամերձում, բեկորներ
8.				ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	գյուղի մեջ	<	Ռ. Մարտիրոսյանի տնամերձում, բեկորներ
9.				ՀՈՒՇԱՐՁՅՈՒՐ	1948 թ.	գյուղի մեջ	S	
10.				ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1982 թ.	գյուղի մեջ	S	
11.				ՔԱՐԱՅՐ-ՄԱՏՈՒՐ «ՃԳՆԱՎՈՐ»	10-13 դդ.	գյուղի հս-ամ կողմում	<	

ՁՈՐԱՂՔՅՈՒՐ ԳՅՈՒՂ

1	2	3	4	5	6	7	8	9
1.				ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ հս-աե	<	
	1.1			Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ հս-աե	<	
2.				ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմամ	<	
3.				ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ ամ	<	
	3.1			Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ ամ	<	
4.				ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ հս-ամ	<	
	4.1			Աշտարակ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ հս-ամ	<	
	4.2			Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմ հս-ամ	<	
5.				ԱՄՐՈՑ «ՍԱՆԳՅԱՐ»	Ք.ա. 2 հազ.	գյուղից 1 կմ հս-աե	<	
6.				ՔԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆ «ԵՌԱՔԼՈՒՐ»	քարի դար	գյուղից 1 կմ հս-աե, Արամուս տանող ճանապարհին	<	
7.				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	13-20 դդ.	գյուղի հվ մասում	<	
	7.1			Խաչքար	14-15 դդ.		<	
	7.2			Խաչքար	15-16 դդ.		<	
	7.3			Խաչքար	15-16 դդ.		S	

	7.4		Խաչքար	15-16 դդ.		S	
	7.5		Խաչքար	16-17 դդ.		S	
	7.6		Խաչքար	16-17 դդ.		S	
	7.7		Խաչքար	16-17 դդ.		S	
	7.8		Հուշադրույր	20 դ.		S	
8.			ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 2 կմամ	<	
9.			ԵԿԵՂԵՑԻ ՍՐ. ԳԻԴԳՈՐԼՈՒՍԱՎՈՐԻՉ	19 դ.	գյուղի մեջ	<	
	9.1		Մատուռ Սր. Խաչ	13 դ.		<	Եկեղեցին կառուցելիս վերածել են հվ-ան ավանդատան
	9.2		Խաչքար	13 դ.		<	
	9.3		Խաչքար	15-16 դդ.	ազուցված է եկեղեցու բեմի ճակատին	<	
	9.4		Խաչքար	19 դ.	ազուցված է եկեղեցու ամճակատին, մուտքի վերևում	<	
	9.5		Խաչքար	12-13 դդ.	Եկեղեցու մոտ	S	ստորին հատվածը
10.			ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ԵՐԿՐՈՐԴԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄՁՈՀՎԱՇՆԵՐԻՆ	1978 թ.	գյուղի հս-ամ մասում	S	
11.			ՀՈՒՇԱՐՔՅՈՒՐ	1978 թ.	գյուղի մեջ	S	
12.			ՄԱՏՈՒՐ	19 դ.	գյուղի մեջ	S	
	12.1		Խաչքար	16-17 դդ.	մատուռի մեջ	S	
	12.2		Խաչքար	16-17 դդ.	մատուռի մոտ	S	
	12.3		Խաչքար	16-17 դդ.	մատուռի մոտ	S	

ՋՐՎԵԺ ԳՅՈՒՂ

1	2	3	4	5	6	7	8	9
1.				ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1 կմ ան	<	«Քոսաարքյուր» վայրում
2.				ԱՐՁԱՆԱԳԻՐ ՔԱՐ	13 դ.		<	
3.				ԲԱՅՕԹՅԱ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ «ՋՐՎԵԺ»	քարի դար	գյուղի համասում, բլուրների լանջերին	<	
	3.1			Բացօթյա կայան «Ջրվեժ-1»	քարի դար		<	
	3.2			Բացօթյա կայան «Ջրվեժ-2»	քարի դար		<	
4.				ԳԵՐԵՁՄԱՆՈՅ	11-17 դդ.	գյուղի հվ-ան մասում	<	
	4.1			Խաչքար	11 դ.		<	
	4.2			Խաչքար	1195 թ.		<	արձանագիր
	4.3			Խաչքար	12-13 դդ.	գերեզմանոցի ամ եզրին	<	ստորին հատվածը
	4.4			Խաչքար	12-13 դդ.	գերեզմանոցի հին և Նոր հատվածների միջև, ճանապարհի եզրին	<	վերին կեսը, պատվանդանի վրա
	4.5			Խաչքար	13-14 դդ.	գերեզմանոցի ամ մասում	<	
	4.6			Խաչքար	13-14 դդ.	Նորակառույց մատուռում	<	հատված
	4.7			Խաչքար	13-14 դդ.	Նորակառույց մատուռում	<	հատված
	4.8			Խաչքար	14-15 դդ.	Եկեղեցու մոտ	<	
	4.9			Խաչքար	14-15 դդ.			
	4.10			Խաչքար	15-16 դդ.	գերեզմանոցի ամ մասում		
	4.11			Խաչքար	15-16 դդ.	գերեզմանոցի ամ մասում	<	հատված
	4.12			Տապանաքար	1596 թ.	գերեզմանոցի ամ մասում	S	արձանագիր Նոր թաղումների հատվածում
	4.13			Տապանաքար	1651 թ.	գերեզմանոցի ամ մասում	S	արձանագիր
	4.14			Տապանաքար	17 դ.	գերեզմանոցի ամ մասում	S	
	4.15			Տապանաքար	17 դ.	գերեզմանոցի ամ մասում	S	
	4.16			Տապանաքար	17 դ.	գերեզմանոցի ամ մասում	<	
5.				ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	4-16 դդ.	գյուղի ան կողմում	<	
6.				ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	6-7 դդ.	գյուղի հվ-ամ մասում, «Աստրո» միավորման մոտ	<	սարկոֆագային թաղումներ
7.				ԵԿԵՂԵՑԻ	4-5 դդ.	գյուղի հվ-ան եզրի գերեզմանոցի հս մասում	<	միանավ սրահ
	7.1			Դամբարան	4-5 դդ.	Եկեղեցուց հս-ան	<	ստորգետնյա, քարե սարկոֆագով

	7.1.1	Կոթող	4-5 դդ.	դամբարանի վրա	<	պահպանվել է գետնախարհիսը
7.2		Խաչքար	13 դ.	ազուցված է եկեղեցու հսպատին, մուտքից աջ	<	
7.3		Խաչքար	15-16 դդ.	ազուցված է եկեղեցու առաջին	<	
7.4		Խաչքար	15-16 դդ.	ազուցված է եկեղեցու հսպատին, մուտքից ձախ	<	
7.5		Խաչքար Մելիքների	16 դ.	ազուցված է եկեղեցու մուտքի աջ կողմում	<	արձանագիր նոր թաղումների հատվածում
7.6		Խաչքար	16 դ.	եկեղեցու բակում	<	արձանագիր
7.7		Տապանաքար		եկեղեցում	<	
8.		ԵԿԵՂԵՑԻ	13 դ.	Քոստաղբյուրից 150 մ ամ, բլրի գագաթին, ամրոցի հվ-ամ մասում	<	գմբեթավոր սրահի ավերակներ
9.		ԵԿԵՂԵՑԻ ՍՔ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ (ԿԱԹՈՂԻԿԵ)	1891 թ.	գյուղի հվ եզրին		կառուցվել է հին եկեղեցու տեղում
9.1		Խաչքար	13 դ.	ազուցված է եկեղեցու մուտքի աջ կողմում	<	
9.2		Խաչքար		ազուցված է եկեղեցու մուտքի վերևում	S	
9.3		Խաչքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու հսկատին, մուտքից առաջ	<	հատված
9.4		Խաչքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու առաջին	<	
9.5		Դարպաս	19 դ.	եկեղեցուց 8 մ առ	S	
9.6		Դարպաս	19 դ.	եկեղեցուց 10 մ հս-ամ	S	
	9.6.1	Խաչքար	12-13 դդ.	ազուցված է դարպասի ձախ կողմում	<	
	9.6.2	Խաչքար	16-17 դդ.	ազուցված է դարպասի աջ կողմում	<	արձանագիր
	9.7	Չանգակատուն	1890 թ.	կից է եկեղեցուն ամ-ից	S	
	9.8	Գերեզմանոց			<	
	9.8.1	Խաչքար		եկեղեցուց հվ-առ	<	
	9.8.2	Խաչքար			<	հատված
	9.8.3	Տապանաքար		եկեղեցու մոտ	<	
10.		ԽԱՉՔԱՐ				Լ. Շահրազյանի տան մոտ
11.		ԿՈԹՈՂ	7 դ.	գյուղի մեջ նորակառուց թուխ մանուկ սրբատեղիում	<	Լ. Ղուկասյանի տան մոտ
12.		ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ԵՐԿՐՈՐԻ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1976 թ.	գյուղի մեջ	S	ճարտ.՝ Գ. Գրիգորյան
13.		ՄԱՏՈՒՌ «ՎԱՆՔԱՔԱՐ» («ԾԱՅԿԱՔԱՐ»)	12 դ.	Քոստաղբյուրից 500 մ հվ	<	
14.		ՍՐԲԱՏԵՂԻ «ԱՄԵՆՓՐԿԻՉ»		գյուղում	S	<. Նիկողոսյանի տան բակում
15.		ՍՐԲԱՏԵՂԻ ՍՔ. ՍԱՐԳԻՍ	ուշ միջնադար	Սք. Կաթողիկե եկեղեցուց 6 կմ հվ-ամ	S	
16.		ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ	5-15 դդ.	գյուղից 2-2.5 կմ առ, «Քոստաղբյուր» վայրում, գյուղից 1 կմ հվ-առ	<	
	16.1	Գավիթ	13 դ.	կից է միանալ եկեղեցուն և մատուռներին	<	վերակառուցվել է 19 դ.
	16.2	Գերեզմանոց	14-18 դդ.		<	
	16.3	Եկեղեցի	6-7 դդ.		<	ճարտ.՝ Հոհան
	16.4	Եկեղեցի	13 դ.	կից է նախորդին հվ-ից	<	միանալ
	16.4.1	Խաչքար	13 դ.	եկեղեցում, առաջատիմոտ	<	
	16.4.2	Խաչքար	13 դ.	եկեղեցում	<	
	16.4.3	Խաչքար	13-14 դդ.	ազուցված է եկեղեցու հս պատին, ներքուստ	<	երկատված է
	16.4.4	Խաչքար	13-14 դդ.	ազուցված է եկեղեցու հս պատին, ներքուստ	<	
	16.4.5	Խաչքար	13-14 դդ.	ազուցված է եկեղեցու հվ պատին, ներքուստ	<	
	16.4.6	Խաչքար	13-14 դդ.	եկեղեցում, հս պատի մոտ	<	
	16.4.7	Խաչքար	13 դ.	եկեղեցու մուտքից հս	<	
16.5		Մատուռ	7 դ.		<	
16.6		Մատուռ	13 դ.	դարավանդի վրա, ճամփի եզրին	<	երկխորան, վերակառ. 19-20 դդ.
	16.6.1	Խաչքար		մատուռում	S	հատված
	16.6.2	Խաչքար		մատուռում	S	հատված
	16.6.3	Խաչքար		մատուռում	S	
	16.6.4	Կառույցներ տնտեսական	17 դ.	մատուռի տարածքում	<	
16.7		Պարիսպ	13-17 դդ.		<	
16.8		Հնձան	13-14 դդ.		<	

IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Համայնքի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները՝ համայնքի միասնական հատակագծային կառուցվածքի կատարելագործում, հին և նոր թաղամասերի օրգանական հատակագծային կապերի ստեղծում, համայնքի հետագա զարգացումը խթանող նոր ֆունկցիոնալ գոտիների ստեղծում՝ հիմք ընդունելով առկա ռեսուրսային հնարավորությունները, արտադրական և կոմունալ օգտագործման տարածքների կանոնակարգում, սանիտարական պահպանական գոտիների պահանջների ապահովում:

15. Զրվեժ համայնքի տնտեսության հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններն են՝

1) Գյուղատնտեսությունը՝ բանջարանոցների և մրգատու այգիների մշակում, հողագործություն, մեղվաբուծություն, գյուղատնտեսական մթերքների վերամշակում,

2) Փոքր և միջին բիզնեսը՝ արտադրական ձեռնարկությունների, սպասարկման և առևտրական կազմակերպությունների շահագործում, նորերի ստեղծում և զարգացում,

3) Ռեկրեացիայի, կարճատև և երկարատև հանգստի ոլորտներում ծառայությունների մատուցում, ամառանոցային տնտեսության զարգացում:

16. Համայնքի քաղաքաշինական զարգացման մեջ հաշվի է առվել.

1) տարածքի փաստացի օգտագործման առանձնահատկությունները,

2) տարածքի համալիր գնահատման արդյունքները,

3) համայնքի ներկա կարիքները,

4) առկա զարգացման միտումները,

5) հեռանկարային զարգացման հնարավորությունները,

6) բնակչության կենցաղն, ավանդույթները և հիմնական զբաղմունքը:

17. Նախագծային լուծումներն ընտրվել են, ապահովելով՝ առկա տարածքային և բնական ռեսուրսների խնայողական օգտագործումը, պատմամշակութային ժառանգության պահպանումը, բնական և քաղաքաշինական լանդշաֆտների բարելավումը, բնակավայրի հատակագծային կառուցվածքի կատարելագործումը, ապրելու, աշխատելու և հանգստի համար բարենպաստ և հրապուրիչ միջավայրի ստեղծումը:

18. Համայնքի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպման հիմքում դրվել են հետևյալ հիմնական սկզբունքները՝

1) համայնքի միասնական հատակագծային կառուցվածքի կատարելագործում, հին և նոր թաղամասերի հարմարավետ հատակագծային կապերի ստեղծում,

2) արտադրական և գյուղատնտեսական օգտագործման տարածքների կանոնակարգում, սանիտարական գոտիների նորմատիվային պահանջների պահպանման ապահովում և կանաչ գոտիների ընդլայնում,

3) սեյսմիկ վտանգի և այլ արտաձին երկրաբանական երևույթների առկայության պայմաններում համայնքի կառուցվածքային-հատակագծային տարրերի հուսալիության և կայունության ապահովում:

19. Հաշվի առնելով տարածքի գերակշռող գործառնական օգտագործումը և կառուցապատման կանոնակարգման անհրաժեշտությունը, համայնքի տարածքում առաջարկվում է կիրառել կառուցապատման հետևյալ սկզբունքները.

1) առավելապես տնամերձ հողամասերով՝ ցածրահարկ առանձնատնային կառուցապատման նոր բնակելի թաղամասերի կազմակերպում,

2) ամառանոցային թաղամասերի զարգացում և բարեկարգում,

3) տարածքում հասարակական սպասարկման գործառույթների կանոնակարգում, սպասարկման օբյեկտների համալիր ձևավորում՝ սպասարկման մատչելիության գոտիներում ընդգրկելով նոր և գոյություն ունեցող բնակելի թաղամասերը,

4) ճանապարհափողոցային ցանցի կատարելագործում,

5) անտառապարկային և ռեկրեացիոն գոտու ձևավորում:

20. Համայնքի տարածքում պահպանման ենթակա են III բաժնում նշվածները, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող հետևյալ շենքերը, շինությունները, կառուցվածքները և ենթակառուցվածքները՝

1) ջրամատակարարման ցանցը, որն ունի ընդլայնման և նորացման կարիք,

2) ջրահեռացման ցանցը, որն ունի ընդլայնման և նորացման կարիք,

3) համայնքի տարածքով անցնող ոռոգման հիմնական ջրանցքները, ոռոգման առուների ցանցը, որն ունի հիմնովին նորոգման, ընդլայնման կարիք,

4) Զրվեժի, Զորաղբյուրի և Զովքի միջնակարգ դպրոցները,

5) Զրվեժի ամբուլատորիայի շենքը,

6) Զորաղբյուրի մանկապարտեզը,

7) Զովքի հանդիսությունների սրահը,

8) համայնքապետարանի և վարչական ղեկավարների նստավայրերի շենքերը,

9) համայնքի փողոցների ցանցը, որն ունի հիմնանորոգման, բարեկարգման և գիշերային լուսավորության կարիք,

10) համայնքի մեջ ընդգրկված բնակավայրերի գերեզմանոցները, որոնց տարածքները կարիք ունեն բարեկարգման:

21. Պահպանման ենթակա շինությունների լուսանկարները բերված են ստորև՝



Ջրվեժի միջնակարգ դպրոց



Ջրվեժի համայնքապետարանի վարչական շենք



Զրվեժի բուժ. Ամբուլատորիա



Զուլքի միջնակարգ դպրոց



Զովքի հանդիսությունների սրահ



Զովքի վարչական ղեկավարի նստավայր



Ձորաղբյուրի միջնակարգ դպրոց



Ձորաղբյուրի մանկապարտեզ



Ձորաղբյուրի վարչական ղեկավարի նստավայր

Վ. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍԿՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

22.Ջրվեժ համայնքում առկա և զարգացման միտումները հաշվի առնելով, սահմանվել են հետևյալ հետևյալ գործառնական գոտիները.

	Պայմանական նշանը	Գործառնական գոտու անվանումը
1.	ԱԲԿԳ	Անհատական բնակելի կառուցապատման գոտի
2.	ԱՌԿԳ	Անհատական ամառանոցային կառուցապատման գոտի
3.	ՀԳ/1	Համայնքային նշանակության հասարակական գոտի
4.	ՀԳ/2	Հասարակական սպասարկման և առևտրի գոտի
5.	ԽԿԳ	Խառը կառուցապատման գոտի
6.	ՊՄՀԳ/1	Պատմամշակութային հուշարձանների պահպանման գոտի
7.	ՊՄՀԳ/1	Պատմական և քաղաքացիական գերեզմանոցների գոտի
8.	ՍՊԿԳ	Սանիտարապաշտպանիչ կանաչ գոտի
9.	ԲՊԳ	Բնապահպանական գոտի
10.	ՀՕԿԳ	Հասարակական օգտագործման կանաչ գոտի
11.	ԻԿԵԳ	Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքների գոտի
12.	ԱՏԳ	Արտաքին տրանսպորտի գոտի
13.	ԸՕԳ	Ընդհանուր օգտագործման գոտի
14.	ԱԳ/1	Արդյունաբերական գոտի
15.	ԱԳ/2	Գյուղատնտեսական արտադրության օբյեկտների գոտի
16.	ԸՆԴԳ	Ընդերք օգտագործման գոտի
17.	ԳՕԳ	Գյուղատնտեսական օգտագործման գոտի
18.	ՌԳ	Ռեզերվային հողերի գոտի

1) Անհատական բնակելի կառուցապատման գոտի՝ «ԱԲԿԳ», ներառում է գոյություն ունեցող և համայնքի հեռանկարային զարգացման նպատակով առաջարկվող բնակելի կառուցապատման նախագծային տարածքները՝

ա.թույլատրելի օգտագործման ձևեր՝ առանձնատներ, բլոկացված բնակելի տներ, մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ՝ ընդհանուր մակերեսով մինչև 150 քառ.մետր, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, հասարակական սննդի օբյեկտներ՝ մինչև 50 նստատեղ, բուժական կաբինետներ, բուժական կենտրոններ, մարզական պարապմունքների տարածքներ՝ մինչև 150 քառ.մետր, գրադարաններ, տուն-թանգարաններ, ցուցասրահներ, հյուրանոցներ և հյուրատներ՝ մինչև 30 տեղ, վարչական, ֆինանսական հիմնարկությունների և սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, անհատական կաթսայատներ, մսուր-մանկապարտեզներ, փոքրածավալ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված չէ աղմուկի, փոշու, վնասարար արտանետումների հետ:

բ. ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ անհատական ձեռնարկատիրության տեսակներ՝ սանիտարական և հակահիդրոէպիդեմիոլոգիայի նորմերի պահպանմամբ, այգիներ, բանջարանոցներ, ընտանի կենդանիների բուծման համար շինություններ, անհատական բաղնիքներ, սաունաներ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելի, քան 2 մեքենայի, բլրկացված տների դեպքում՝ ոչ ավելի, քան 1 մեքենայի համար):

2) Անհատական ամառանոցային կառուցապատման գոտի՝ «ԱՌ-ԿԳ». ներառում է գոյություն ունեցող և համայնքի հեռանկարային զարգացման նպատակով նախատեսված ամառանոցների տարածքները՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ առանձնատներ, մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ՝ ընդհանուր մակերեսով մինչև 150 քառ.մետր, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, հասարակական սննդի օբյեկտներ՝ մինչև 50 նստատեղ, բուժական կաբինետներ, մարզական պարապմունքների տարածքներ մինչև 150 քառ.մետր, գրադարաններ, տուն-թանգարաններ, ցուցասրահներ, սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, անհատական կաթսայատներ:

բ. ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ անհատական ձեռնարկատիրության տեսակներ՝ սանիտարական և հակահիդրոէպիդեմիոլոգիայի նորմերի պահպանմամբ, այգիներ, բանջարանոցներ, անհատական բաղնիքներ, սաունաներ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելի, քան 2 մեքենայի, բլրկացված տների դեպքում՝ ոչ ավելի, քան 1 մեքենայի համար):

3) Համայնքային նշանակության հասարակական գոտի՝ «ՀԳ/1». ներառում է համայնքապետարանի, միջնակարգ դպրոցի, մանկապարտեզի, բժշկական ամբուլատորիաների, հանդիսությունների սրահի, ինչպես նաև նախատեսված նոր դպրոցի և մանկապարտեզի համար առանձնացված տարածքները՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ վարչական, ֆինանսական, փոստի և կապի բաժանմունքներ, կրթական, նախադպրոցական, բուժական, սպորտային, մշակութային և կրոնական հաստատություններ, ոստիկանության տեղամասեր, հրշեջ ծառայություններ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ:

բ. ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ, մանրածախ առևտրի կետեր, խանութներ, կրպակներ:

4) Հասարակական սպասարկման և առևտրի գոտի՝ «ՀԳ/2», ներառում է առկա կենցաղ-սպասարկման առաջնային ծառայությունների և առևտրի կետերի տարածքներ և դրանց զարգացման համար նախատեսված նախագծային տարածքները՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ հասարակական սննդի կետեր, առևտրի կենտրոններ, խանութներ, մթերային և արտադրական ապրանքների շուկաներ, տոնավաճառներ, կենցաղ-սպասարկման առաջնային ծառայություններ, հյուրանոցներ և մոթելներ (մինչև 40 տեղ), փոստի, կապիբաժանմունքներ, բենզալցակայաններ, գազալիցքավորման կետեր, ավտոտեխսպասարկման կետեր, հանրային բաղնիքներ, սաունաներ, զուգարաններ:

բ. ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ:

5) **խառը կառուցապատման գոտի՝ «ԽԿԳ»**, առանձնացվում է արդեն կազմավորված խառը՝ բնակելի և հասարակական կառուցապատում ունեցող թաղամասերի վերակառուցման և կանոնակարգման համար, ինչպես նաև հիմնական ճանապարհներին հարակից տարածքներում համայնքի կենսագործունեության ակտիվ առանցքներ ստեղծելու նպատակով՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ առանձնատներ, բլոկացված տներ, այդ թվում՝ առանց տնամերձ հողամասերի, հյուրանոցներ, մոթելներ, մանկապարտեզներ, մանկամսուրներ, վճարովի և կիրակնօրյա դպրոցներ, պոլիկլինիկաներ, բուժական կաբինետներ, կենտրոններ, վարչական, ֆինանսական և այլ քաղաքային նշանակության ծառայությունների շենքեր և գրասենյակներ, կենցաղ-սպասարկման, զբոսաշրջային և մարզային ծառայությունների օբյեկտներ, ակումբներ և հասարակական հավաքատեղիներ, գիշերային ակումբներ, մշակութային օբյեկտներ (թատրոններ, կինոթատրոններ, գրադարաններ, ցուցասրահներ և այլ), առևտրի մեծ և փոքր օբյեկտներ՝ այդ թվում բացօթյա տոնավաճառներ և շուկաներ, հանրային սննդի օբյեկտներ (առանց սահմանափակումների), ոչ մեծ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված չէ աղմուկի, պայթուցիկ և հրդեհավտանգ նյութերի և մթնոլորտի աղտոտման (ծուխ, գազեր) հետ:

բ. ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, ավտոկանգառներ, տրանսպորտի հավաքակայաններ և կառույցներ, փոքր ճարտարապետական ձևեր, բաց սպորտային խաղահրապարակներ, լողավազաններ, տաղավարներ, կրպակներ:

6) **Պատմամշակութային հուշարձանների պահպանման գոտի՝ «ՊՄՀԳ/1»**, ներառում է պատմամշակութային հուշարձանները և դրանց պահպանական գոտիները՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ եկեղեցիներ, մատուռներ, զանգակատներ և այլ եկեղեցական կառույցներ:

բ. ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ հուշարձանները սպասարկող աշխատակազմի կացարաններ, թանգարաններ, ճարտարապետական փոքր ձևեր և

ավտոտրանսպորտի կայանատեղեր, զբոսաշրջիկներին սպասարկող առաջին անհրաժեշտության օբյեկտներ, հուշանվերների և արագ սննդի կրպակներ:

7) Պատմական և քաղաքացիական գերեզմանոցների գոտի՝ «ՊՄՀԳ/2». ներառում է պատմական և գործող քաղաքացիական գերեզմանոցների տարածքները՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ փոքր ճարտարապետական ձևեր, կոթողներ:

բ. ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ աշխատակազմի համար նախատեսված շենք/շինություններ և արհեստանոցներ, ոչ հիմնական շինություններ, ծածկեր:

8) Սանիտարապաշտպանիչ կանաչ գոտի՝ «ՍՊԿԳ». ներառում է պատմական և քաղաքացիական գերեզմանոցների շուրջ ստեղծվող հատուկ բույսերի կիրառմամբ կանաչապատ և ծառապատ տարածքները՝

ա.թույլատրելի օգտագործման ձևեր՝ հատուկ նշանակության կանաչապատում, տնտեսական և պահեստային շինություններ, ոչ ջրային ինժեներական ենթակառուցվածքի օբյեկտներ, ավտոտնակներ, ավտոտրանսպորտի կայանատեղեր:

9) Բնապահպանական գոտի՝ «ԲՊԳ». ներառում է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի «Ջրվեժ» անտառապարկի տարածքը՝

ա.թույլատրելի օգտագործման ձևեր՝ Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի:

10) Հասարակական օգտագործման կանաչ գոտի՝ «ՀՕԿԳ». ներառում է համայնքային նշանակության կանաչ տարածքներ, մայթերի և հրապարակների կանաչ հատվածները՝

ա.թույլատրելի օգտագործման ձևեր՝ այգեպուրակային տարածքներ, ջրավազաններ, տաղավարներ, զրուցարաններ, ճարտարապետական փոքր ձևեր:

բ. ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ:

11) Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքների գոտի՝ «ԻԿԵԳ». ներառում է ինժեներական ենթակառուցվածքի կետային օբյեկտների տարածքներ՝ օրվա կարգավորիչ ջրամբարներ, էլեկտրականության, գազի և կապի ենթակայաններ, աղբավայրի տարածքը՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ օրվա կարգավորիչ ջրամբարներ, ջրամատակարարման բաշխիչ հորեր, կոյուղու ցանցային հորեր, պահեստներ, էլեկտրական ենթակայաններ, ավտոմատ գազաբաշխիչ կայաններ (ԱԳԿ), գազակարգավորիչ պահարանային կետեր (ԳՊԿ), փոքր հզորության լոկալ կաթսայատներ մինչև 5 ՀԿ/ժամ, հեռախոսային կապի բախշիչ կետեր (պահարանային), կապի ավտոմատ հեռախոսային կայաններ, աղբավայրեր:

12) Արտաքին տրանսպորտի գոտի՝ «ԱՏԳ». ներառում է համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների հատվածները՝ համապատասխանաբար 18.0 մ և 15.0 մ կարմիր գծերի սահմաններում, ինչպես նաև ճանապարհի սպասարկման համար նախատեսված տարածքները՝

ա.թույլատրելի օգտագործման ձևեր՝ տրանսպորտային համակարգի կառույցներ, միջհամայնքային տրանսպորտի կանգառներ, տրանսպորտի հավաքատեղիներ, ճանապարհային կանաչ գոտիներ:

13) Ընդհանուր օգտագործման գոտի՝ «ԸՕԳ», ներառում է համայնքային նշանակության ճանապարհներ և փողոցներ (կարմիր գծերի սահմաններում), բաց տարածքներ՝ հրապարակներ, հարթակներ՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ ճանապարհային եզրային կանաչապատում, արտաքին լուսավորություն, գովազդ, փոքր ճարտարապետական ձևեր, հրապարակներում՝ շատրվաններ, ջրավազաններ, ծաղկանոցներ և բարեկարգման այլ տարրեր:

14) Արդյունաբերական գոտի՝ «ԱԲԲ», ներառում է բնակավայրի սահմաններում գտնվող չօգտագործվող անասնագոմերի տարածքներ, տարբեր տեսակի արտադրական ձեռնարկությունների տարածքներ (գոյություն ունեցող և նախագծային): Գյուղատնտեսական արտադրության օբյեկտների տարածքները փոփոխվում են արտադրականի՝ մաքուր արտադրություն իրականացնող ձեռնարկություններ հիմնելու նպատակով՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ սանիտարական գոտի չպահանջող արտադրական ձեռնարկություններ՝ գյուղմթերքների վերամշակման, սննդամթերքի (հաց, հրուշակեղեն, ըմպելիք) արտադրության, թեթև արդյունաբերության, արհեստագործական արտադրամասեր (ավանդական արհեստներ՝ խեցեգործություն, գորգագործություն և այլն), որոնք կապված չեն աղմուկի, փոշու և վնասարար արտանետումների հետ:

բ. ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ:

15) Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գոտի՝ «ԱԳ/2», ներառում է բնակավայրից դուրս գտնվող անասնապահական գոմերի տարածքները և նախատեսված դրանց ընդլայնումները:

ա.թույլատրելի օգտագործման ձևեր՝ անասնապահական ֆերմաներ և համալիրներ, թռչնաբուծարաններ, անասնագոմեր, վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, անասնաբուժական լաբորատորիաներ, պահեստներ:

բ.ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ցանկապատներ, փարախներ, անձրևապաշտպանիչ ծածկեր, տնտեսական այլ շինություններ:

16) Ընդերքի օգտագործման գոտի՝ «ԸՆԴԳ», ներառում է հին (պատմական) թաղամասից հարավ գտնվող ընդերք օգտագործման նպատակով տրամադրած հողամասերը (բազալտ, գիպսակավ)՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ ընդերքօգտագործման հետ կապված օբյեկտներ, վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, պահեստներ:

բ. ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ավտոտրանսպորտի, շինարարական և արդյունահանման տեխնիկայի և մեխանիզմների համար նախատեսված հարթակներ, ծածկեր, ավտոտնակներ, տնտեսական այլ շինություններ:

17) Գյուղատնտեսական օգտագործման գոտի՝ «ԳՕԳ», համայնքի սահմաններում ներառված վարելահողեր, մրգատու այգիներ և գյուղատնտեսական այլ տարածքներ՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ այգեգործություն, հողագործություն, ջերմոցներ, տնկարաններ, ոչ հիմնական պահեստային և կենցաղային շինություններ, արևապաշտպանիչ ծածկեր:

18) Ռեզերվային գոտի՝ «ՌԳ», ներառում է բնակավայրի ներսում կառուցապատման համար ոչ պիտանի հողեր և այլ չօգտագործվող ռեզերվային տարածքներ՝

ա. թույլատրելի օգտագործման ձևեր՝ համաձայն չնախատեսված անհրաժեշտության կամ նոր (համայնքային և մասնավոր հատվածի) նախաձեռնությունների՝ քաղաքաշինական նորմերի պահպանմամբ, ինժեներական ենթակառուցվածքի օբյեկտներ:

23. Կառուցապատման կանոններ՝

1) Շինարարական աշխատանքներ իրականացնելիս արգելվում է խախտել՝

ա. փողոցների, հրապարակների, թաղամասերի սահմաններն որոշող կարմիր գծերը,

բ. կառուցապատման նպատակով տրամադրված հողամասերի սահմանները:

2) Հողամասերը կարող են օգտագործվել միայն դրանց նպատակային նշանակությամբ համապատասխան,

3) Կառուցապատումը պետք է իրականացվի սահմանված կարգով համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերին համապատասխան՝ շինարարության ընթացքում պահպանելով գործող նորմերը և կանոնները,

4) Բնակելի թաղամասերի կառուցապատումը պետք է իրականացվի ինժեներատրանսպորտային և սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքների անցկացման և արտաքին բարեկարգման և կանաչապատման աշխատանքների հետ միաժամանակ,

5) Համայնքի տարածքում նպատակահարմար է և խրախուսվելու է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված գյուղական բնակավայրերի համար մշակված օրինակելի նախագծերով, ինչպես նաև մասնագիտական կազմակերպությունների կողմից մշակվող անհատական նախագծերով բնակելի տների շինարարությունը:

6) Կառուցապատումը, փողոցների, մայրերի և հրապարակների բարեկարգումը, փոքր ճարտարապետական ձևերը պետք է իրականացվեն երկարակյաց շինարարական նյութերից, որոնք թույլ կտան դրանց լվացումը, մաքրումը և պահպանումը,

7) Պարտադիր պետք է իրականացվեն մայրերի և սիզամարգերի եզրաքարերը, նիշերի անկման հատվածներում՝ թեքահարթակները, մայրերի և անցումների նվազագույն լայնությունը, նստարանների, փոքր ճարտարապետական ձևերի, աղբարկղերի, կրպակների, արտաքին

լուսավորության, գովազդի, բարեկարգման այլ էլեմենտների չափերը և տեղադիրքը պետք է ապահովեն անխափան շարժումը,

8) Թաղամասերի կառուցապատումը բնակելի և հասարակական շենքերով պետք է իրականացվի փողոցների և ճանապարհների երկայնքով՝ օժանդակ շինությունները պետք է տեղադրվեն հողամասերի խորքում՝ կոմպակտ խմբերով, անհրաժեշտության դեպքում ապահովելով դրանց մուտքը երկրորդական փողոցներից,

9) Անհատական բնակելի տների կառուցապատողները պարտավոր են վերականգնել շինարարության ընթացքում վնասած հողամասին հարող մայթերը, բարեկարգումը, պահպանել դրանք և փողոցի համապատասխան հատվածը (մինչև առանցք), հողամասի պարսպապատումը իրականացնել միայն սահմանված կառուցապատման չափորոշիչներին համապատասխան,

10) Համայնքի տարածքում առկա անտառային, կանաչապատ տարածքները և տնկումները՝ լանդշաֆտի հատուկ պահպանվող տարրեր են և տեղական իշխանության մարմինները, հողամասերի և արտադրական ձեռնարկությունների սեփականատերերը պարտավոր են ապահովել դրանց պահպանվածությունը:

11) Հողամասերի կառուցապատման և ստորգետնյա կոմունիկացիաների անցկացման ընթացքում վնասված ծառերը և տնկումները պետք է վերականգնվեն համարժեք փոխհատուցմամբ:

24. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրաց առանձին մասերին ներկայացվող պահանջները՝

1) Շինարարական նյութեր.

ա. նախընտրելի են բնական և էկոլոգիապես անվնաս շինանյութերը՝ տուֆ, բազալտ, տրավերտին, կրաքար, այլ բնական քարեր, փայտ, մետաղ, ապակի, բետոն, սվաղի վրայով արտաքին ֆասադային ներկ:

2) Գունային լուծումներ.

ա. շրջակա միջավայրի բնական պալիտրային ներդաշնակ: Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի հիմնական տարրերը գերադասելի է լուծել մեղմ գույներով՝ օգտագործելով օխրայի, տերակոտաների, մոխրագույնի և դարչնագույնի բոլոր երանգները: Որոշ դեպքերում՝ կոնտրաստային շեշտադրումներ ստեղծելու նպատակով կիրառելի է նաև արհեստական վառ գույների օգտագործումը՝ ժամանակավոր կառույցների, բարեկարգման առանձին էլեմենտների (նստարաններ, աղբամաններ, գովազդային ստենդեր և այլն) համար:

բ. ստորև բերված աղյուսակում նշված են առաջարկվող արտաքին պատերի, տանիքների, շինարարական նյութերի և գունային ներկապնակների տվյալները՝

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱՆՎԱՆ ՆՅՈՒՅԻՆ ԵՎ ԳՈՒՆԱՅԻՆ ՆԵՐՎԱԴՄԱԿ

Շինանյութ	Արթիկի տուփ	Անիի տուփ	Երևանի, Գյումրիի տուփ	Գեղարքարի տուփ	Մեծալանի տուփ	Չորագետի տուփ	
Գունային ներկապնակ		դիդին	սև, կարմիր	բաց վարդագույն, մարմնագույն	մուգ վարդագույն, կարմրավուն, մարմնագույն, դեղնավուն	արդյաագույն, կարմրավուն	
	RGB	244-176-131	74-68-42	242-219-218	221-131-131	241-153-93	
	RGB	239-151-91	64-58-62	237-205-203	208-84-84	186-73-28	
	RGB	200-148-0	196-89-17	251-228-213	247-202-172	163-64-25	
			182-66-2		238-176-0		
		Քազալտ	Տրավերտին	Մարմար	Գրանիտ	Քևտոն	
	RGB	191-191-191	255-246-225	235-245-255	213-220-228	201-201-201	
	RGB	174-170-170	202-140-16	245-255-235	172-185-202	123-123-123	
	RGB	118-113-113			50-62-79	82-82-82	
					173-61-80		
					53-97-95		

ՏԱՆԻՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱՆՎԱՆ ՆՅՈՒՅԻՆ ԵՎ ԳՈՒՆԱՅԻՆ ՆԵՐՎԱԴՄԱԿ

Շինանյութ	Բնական և արհեստական կրկնորդ , մետաղե թիթեր, պրոֆիլ, պրոֆնաստիլ , այլ					
Գունային ներկապնակ						
	RGB RAL	131-60-11 8003	159-51-33 3016	191-143-0 1005		120-136-125 7003

բ. բոլոր շենքերի կիսանկուղների պատուհանների գոգերը մայթից պետք է բարձր լինեն առնվազն 30 սմ:

6) Շենքերի շքամուտքեր.

ա.շենքերի շքամուտքերի աստիճանները չպետք է անցնեն փողոցի կարմիր գիծը:

7) Արտաքին գովազդ.

ա.շենքերին կցված գովազդային վահանակների մակերեսը չպետք է գերազանցի շենքի ճակատային պատի 10 %-ը:

բ.փողոցներում տեղադրվող առանձին կանգնած գովազդային վահանակները պետք է տեղադրվեն մոտակա կարգավորվող խաչմերուկից առնվազն 50 մ հեռավորության վրա:

8) Ցուցանակներ և անվանատախտակներ.

ա.փողոցների անվանատախտակները պետք է տեղադրվեն ստանդարտ չափերով՝ միասնական հատուկ նախագծի համաձայն,

բ. բնակելի տների և հիմնարկությունների անվանատախտակները կցվում են միայն շքամուտքների դռներին:

9) Փողոցային լուսավորություն.

ա. մինչև 12 մ լայնություն ունեցող փողոցներում լուսավորության սյուների կիրառումն արգելվում է: Այս կարգի փողոցներում լուսավորությունը պետք է կազմակերպվի պատի աշտանակներով (բրա):

10) Աղբահեռացման կոնտեյներներ.

ա.Համայնքային նշանակության փողոցների, ինչպես նաև հասարակական առավելագույն ձգողության և կուտակման վայրերին հարակից տարածքներում աղբարկղները տեղադրել ոչ ավելի, քան 100 մ հեռավորության վրա, հատուկ փակվող տիպի, բանուկ մասերին չխանգարող տարածքներում,


բ.տեղական նշանակության փողոցների վրա հիմնական խաչմերուկների վրա, դրանց հեռավորությունը 200 մետրից պակաս լինելու դեպքում՝ 200 մետրը մեկ:

25.Գոտևորմանը չհամապատասխանող կառուցապատման կարգավորում

1) Գոտևորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող շենքերի և կառույցների ընդարձակում չի թույլատրվում:

2) Գոտևորմանը չհամապատասխանող օրինական համարվող շենքերը և շինությունները կարող են վերակառուցվել կամ վերանորոգվել, եթե արդյունքում նվազում է գոտևորմամբ սահմանված դրույթներին անհամապատասխանությունը:

3) Եթե գոտևորմանը չհամապատասխանող օրինական համարվող կառույցի վերանորոգման արժեքը գերազանցում է նրա տեղափոխման արժեքի 50 %-ը, ապա այդ կառույցը վերանորոգման



ենթակա չէ և կապիտալ նորոգման կարիքի դեպքում պետք է տեղափոխվի կամ համապատասխանեցվի գոտու համար սահմանված թույլատրելի օգտագործումների ձևերին:

26. Հուշարձանների պահպանությանը և վերականգնմանն ուղղված միջոցառումներ՝ առաջարկվում է, համապատասխան մասնագետների ներգրավմամբ իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք կնպաստեն համայնքում առկա արժեքների պահպանմանը և դրանց ծառայեցմանը բնակիչների և զբոսաշրջիկների մշակութային կարիքներին: Կարևոր և առաջնահերթ են հետևյալ միջոցառումները՝

1) համայնքի տարածքում հաշվառված և պետական ցանկում ընդգրկված բոլոր հուշարձանների իդենտիֆիկացումը, լուսանկարումը, նկարագրությունը, կառույցների չափագրությունը, հուշարձանների վկայականների կազմումը, համայնքում հուշարձանների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծումը,

2) հուշարձանների տեխնիկական վիճակի գնահատումը, վերականգնման կարիք ունեցող հուշարձանների ընդգրկումը համայնքի կամ պետության կողմից նախատեսվող նպատակային ծրագրերում,

3) սահմանված պահպանական գոտիների նշահարումը տեղանքում և դրանցում առկա քաղաքաշինական իրավիճակի գնահատումը, նկարագրությունը, անհրաժեշտության դեպքում՝ կարգավորումը,

4) հուշարձանների և դրանց պահպանական գոտիների, ինչպես նաև դեպի հուշարձաններ տանող ճանապարհների բարեկարգումը,

5) համայնքային տուրիստական քարտեզի կազմումը, ցուցանակների և ուղեւղանշանների տեղադրումը, այլ տեղեկատվության ապահովումը:

27. Սանիտարապաշտպանիչ գոտիներում իրականացվելիք միջոցառումներ՝

1) Գերեզմանների, կոմունալ և արտադրական օբյեկտների սանիտարապաշտպանիչ գոտիների և կարմիր գծերում գծային օբյեկտների տարածքները, որոնք փաստացի զբաղեցված են բնակելի և հասարակական կառույցներով, սահմանվում են որպես բուֆերային գոտիներ, որտեղ արգելվում են բոլոր տեսակի նոր բնակելի և հասարակական կառուցապատմանը և վերակառուցմանն ուղղված գործողություններ:

2) Այդ տարածքներում անհրաժեշտ է իրականացնել հնարավոր չափով կանաչապատման աշխատանքներ, գերեզմանոցների սանիտարական գոտիներով կամ դրանց հարակից տարածքներով անցնող ջրագծերի վիճակը պետք է դրվի խիստ վերահսկման տակ, անհրաժեշտության դեպքում խողովակները պետք է վերանորոգվեն, հնարավորության դեպքում տեղափոխվեն: Պետք է իրականացվի նաև այդ տարածքների սանիտարահիգիենիկ իրավիճակի վերահսկողություն, տարածքների բեռնաթափում:

3) Գերեզմանոցների տարածքի ընդլայնումը դեպի բնակելի տարածքներ չի թույլատրվում: Սանիտարական գոտիներում անհրաժեշտ է ստեղծել առնվազն 20 մ լայնությամբ ծառապատ շերտեր:

28. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները՝ համայնքի տարածքում ընդգրկված լանդշաֆտների զարգացմանն ուղղված միջոցառումներն առաջարկվում են երկու հիմնական ուղղություններով՝ միջոցառումներ բնական լանդշաֆտների պահպանության և միջոցառումներ քաղաքաշինական լանդշաֆտների բնութագրերի բարելավման ու գրավիչ միջավայրի ստեղծման համար՝

1) Բնական լանդշաֆտների պահպանման և բարելավման ուղղությամբ կարևորվում է.

ա. անտառապատ և ծառապատ տարածքների պահպանումը և ընդարձակումը,

բ. գետերի, հունների, ձորերի և ձորակների տարածքների սանիտարական մաքրումը, ափերի (լանջերի) ամրացումը:

գ. բնական լանդշաֆտների վրա ոչ անմիջապես, սակայն էականորեն ազդող գործոն են համարվում աղբահանության խնդիրների կանոնակարգումը, կենցաղային և հեղեղատար կոյուղու կառուցումը, շրջակա միջավայրն աղտոտող արտանետումների և գյուղատնտեսությունում կիրառվող պարարտանյութերի սահմանափակումը: Հաշվի առնելով, որ բնակչությունը բացի այգեգործությունից զբաղվում է նաև անասնապահությամբ և այդ նպատակով օգտագործում է բոլոր մատչելի բնական արոտները, անհրաժեշտ է կառավարել բեռնվածությունը այդ տարածքների վրա, թույլ տալով բնական ծածկույթի ինքնավերականգնումը:

2) Քաղաքաշինական լանդշաֆտները ձևավորվել են մարդու կողմից իրականացվող տարբեր տեսակի գործունեության արդյունքում: Այդ տեսանկյունից դիտարկվում են.

ա. պատմամշակութային արժեք ներկայացնող տարածքները,

բ. բնակավայրի կառուցապատված հատվածները,

գ. գյուղատնտեսական նշանակության հողատարածքները և ռեկրեացիոն (անտառային) տարածքները,

դ. արտադրական (գյուղարտադրություն, ընդերքօգտագործում) տարածքները:

29. Սահմանվում են պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիները, առաջարկվում են հուշարձանների պահպանմանը և վերականգնմանն ուղղված միջոցառումների համալիրը:

30. Կառուցապատված տարածքների լանդշաֆտային բնութագրերի բարելավմանը և որակյալ միջավայրի ստեղծմանն ուղղված միջոցառումները ներկայացված են տարածքների հիմնական (ըստ նպատակային նշանակության) և օժանդակ (ըստ գործառնական նշանակության) գոտևորման, ինչպես նաև կառուցապատման չափորոշիչների և կանոնների սահմանման միջոցով:

31. Համայնքի տարածքի լանդշաֆտային բնութագրերի վրա էական ազդեցություն են թողնում գյուղատնտեսական նշանակության հողատարածքները: Մշակված հողահանդակները, դաշտերը քամուց պաշտպանող ծառաշերտերը, մրգատու այգիները և արոտավայրերը՝ այն հիմնական տարրերն են, որ ստեղծում են գյուղական վայրերին բնորոշ լանդշաֆտներ:

32. Գյուղատնտեսական լանդշաֆտների բարելավման համար, հողերի էոզիայի երևույթների կանխարգելման, հողի բերրի շերտի որակի բարձրացման համար կարևորվում են ոռոգման

համակարգերի առկայությունը, գյուղատնտեսական գործունեության դիվերսիֆիկացումը, գյուղատնտեսության վարման ընդհանուր մշակույթի բարձրացումը:

33. Համայնքի արտադրական տարածքները ներկայացված են փոքր և միջին ձեռնարկությունների (մասամբ չշահագործվող) շինություններով: Կանոնակարգվում են առկա արտադրական նշանակության տարածքների օգտագործման, զարգացման կամ վերազարգացման խնդիրները: Փոքր և միջին բիզնեսի զարգացումը ևս կարող է նպաստել այս նշանակության տարածքների զարգացմանը՝ նոր արտադրական միավորների ստեղծման և գործարկման միջոցով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մարտի 2019 թվականի N 9-Ա

ԶՐՎԵՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՐՎԵՃ ԳՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի N 12 դրական եզրակացությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի վարչական տարածքում գտնվող 16-րդ փողոցի թիվ 28 հասցեի 2,013772 հեկտար մակերեսով հատուկ պահպանվող պատմական և մշակութային տարածքների հողակտորի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրի հողերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան, ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

կողմ (10)

դեմ (0)

ծեռնպահ (0)

ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍՍԱՐՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ

ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՈՐԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մարտի 15
գ. Զրվեժ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ. փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մարտի 2019 թվականի N 10-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի պահանջներով, հիմք ընդունելով «ԳԵՈՎԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի մարտի 4-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 6/17 հասցեի հողակտորի հարևանությամբ գտնվող 123,6 քառ.մետր մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Զրվեժ համայնքի Զրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 6/17 հասցեի հողակտորի հարևանությամբ գտնվող բնակավայրի հասարակական կառուցապատման 123,6 քառ.մետր մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

	կողմ (10)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2019 թ. մարտի 15
Գ. Զրվեժ



ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԿԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ. փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մարտի 2019 թվականի N 11-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՐԿԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 70-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 10-րդ և 13-րդ հոդվածների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի պահանջներով, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Կոտայքի մարզի Զրվեժ համայնքում աղբահանության իրականացման կարգը, համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Կոտայքի մարզի Զրվեժ համայնքի սանիտարական մաքրման սխեման, համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 20-ի «Կոտայքի մարզի Զրվեժ համայնքում աղբահանության իրականացման կարգը և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին» N 70-Ն որոշումը:

	կողմ (10)	դեմ (0)	ծեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌՈՐԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մարտի 15
գ. Զրվեժ



Կ Ա Ր Գ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում աղբահանության իրականացումը:

2. Աղբի հեռացումը Ջրվեժ համայնքի վարչական տարածքից իրականացվում է համայնքի տարածքում տեղադրված աղբամաններից, բնակելի տներից, հասարակական և արտադրական նշանակության կառույցներից՝ շաբաթական առնվազն երկու անգամ:

3. Անհատական բնակելի տներից աղբի հեռացումը իրականացվում է մասնագիտացված աղբատար մեքենայով, ինչպես նաև աղբի հեռացման համար նախատեսված բեռնատար մեքենաներով՝ փաթեթավորված կամ տարաներում լցված աղբի բարձման միջոցով:

4. Համայնքի տարածքում տեղադրված աղբամաններից աղբը հեռացվում է մինչև աղբամանների ամբողջությամբ լցվելը:

5. Աղբամաններից, փաթեթավորված կամ տարաներում լցված աղբի շրջապատում առկա և հեռացման ընթացքում թափված աղբը պետք է հավաքվի և հեռացվի:

6. Համայնքի տարածքում առկա կենցաղային աղբը պարտադիր հեռացվում է՝ անկախ աղբ առաջացնողի ներկա լինելու հանգամանքից:

7. Ոչ կենցաղային աղբը, ինչպես նաև խոշոր եզրաչափերով աղբը հավաքվում և պահվում է աղբահանության վճար վճարողների ձեռք բերած աղբամաններում, որոնք տեղադրվում են աղբահանության վճար վճարողներին պատկանող համապատասխան տարածքներում:

8. Աղբահանությունը Ջրվեժ համայնքում կազմակերպել համաձայն հետևյալ նվազագույն ժամանակացույցի՝

h/h	Փողոցների, տարածքների անվանումները	Շարաթվա օրերը
Համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ		
1	Մելքոնյան փողոցը սկզբնամասից մինչև Մելքոնյան փողոցի 2-րդ նրբանցքի հատման կետ	Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ
2	Մելքոնյան փողոց 1-ին նրբանցք, 1-ին, 2-րդ, 3-րդ փակուղիներ	
3	2-րդ փողոց, 2-րդ փողոց 1-ին փակուղի	
4	4-րդ փողոց	
5	6-րդ փողոց, 6-րդ փողոց 1-ին, 2-րդ նրբանցքներ, 1-ին, 2-րդ փակուղիներ	
6	7-րդ փողոց	
7	8-րդ փողոցը 1-ին նրբանցքի հատման կետից մինչև 10-րդ փողոց	
8	10-րդ փողոց, 10-րդ փողոց 1-ին փակուղի	
9	17-րդ փողոց	
10	18-րդ փողոց	
11	41-րդ փողոց	
12	42-րդ փողոց	
13	43-րդ փողոց	
14	44, 45, 46-րդ փողոցներ՝ 40-րդ փողոցի հատման կետից մինչև փողոցների վերջնամաս	
15	49-րդ փողոց	
16	50-րդ փողոց	
17	Մելքոնյան փողոցը՝ 2-րդ նրբանցքի հատման կետից մինչև Եկեղեցի	Երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ
18	Մելքոնյան փողոց 2-րդ նրբանցք	
19	1-ին փողոց, 1-ին փողոց 1-ին նրբանցք, 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ փակուղիներ	
20	3-րդ փողոց	
21	5-րդ փողոց	
22	8-րդ փողոցը սկզբնամասից՝ մինչև 1-ին նրբանցքի հատման կետ	
23	8-րդ փողոց 1-ին նրբանցք	
24	9-րդ փողոց	
25	11-րդ փողոց	
26	12-րդ փողոց, 12-րդ փողոց 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ փակուղիներ	
27	13-րդ փողոց, 13-րդ փողոց 1-ին փակուղի	
28	19-րդ փողոց	
29	20-րդ փողոց	
30	21-րդ փողոց	
31	22-րդ փողոց	
32	23-րդ փողոց	
33	24-րդ փողոց	
34	25-րդ փողոց	
35	26-րդ փողոց	
36	27-րդ փողոց	
37	28-րդ փողոց	
38	29-րդ փողոց	
39	30-րդ փողոց	
40	31-րդ փողոց	
41	32-րդ փողոց	
42	34-րդ փողոց	
43	36-րդ փողոց	
44	37-րդ փողոց	
45	40-րդ փողոց	
46	44, 45, 46-րդ փողոցների սկզբնամասից մինչև 40-րդ փողոցի հատման կետ	
47	14-րդ փողոց, 14-րդ փողոց 1-ին փակուղի	Երեքշաբթի և ուրբաթ
48	15-րդ փողոց	
49	16-րդ փողոց	
50	2-րդ դաշտ	Չորեքշաբթի և շաբաթ
51	3-րդ դաշտ	
52	Այգեգործական թաղամասեր	Երկուշաբթի և հինգշաբթի
53	Գերեզմանատուն N 1 (հին գյուղատեղի)	Երեքշաբթի և ուրբաթ
54	Գերեզմանատուն N 2 (նոր գյուղատեղի)	Չորեքշաբթի և շաբաթ
55	Գերեզմանատուն N 3 (գազալցակայանի հարևանությամբ)	

Համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր		
1	Անտառային փողոց	Երկուշաբթի և հինգշաբթի
2	Անտառային փողոց 1 փակուղի	
3	Անտառային փողոց 2 փակուղի	
4	Անտառային փողոց 3 փակուղի	
5	Գերեզմանատներ	
6	Այգեգործական թաղամասեր	
7	7-րդ Փողոց	Երեքշաբթի և ուրբաթ
8	9-րդ Փողոց	
9	Ազատության փողոց 1-ին նրբանցք	
10	Ազատության փողոց 11-րդ նրբանցք 1-ին փակուղի	
11	Ազատության փողոց 12-րդ նրբանցք 1 փակուղի	
12	Ազատության փողոց 13-րդ նրբանցք	
13	Ազատության փողոց 13-րդ նրբանցք 1 փակուղի	
14	Ազատության փողոց 13-րդ նրբանցք 2 փակուղի	
15	Ազատության փողոց 14-րդ նրբանցք	
16	Ազատության փողոց 15-րդ նրբանցք	
17	Ազատության փողոց 16-րդ նրբանցք	
18	Ազատության փողոց 17-րդ նրբանցք	
19	Ազատության փողոց 18-րդ նրբանցք	
20	Ազատության փողոց 19-րդ նրբանցք	
21	Ազատության փողոց 19-րդ նրբանցք 1-ին փակուղի	
22	Ազատության փողոց 20-րդ նրբանցք	
23	Ազատության փողոց 2-րդ փակուղի	
24	Ազատության փողոց 3-րդ փակուղի	
25	Ազատության փողոց 4-րդ փակուղի	
26	Անկախության փողոց	
27	Անկախության փողոց 1-ին նրբանցք	
28	Անկախության փողոց 2-րդ նրբանցք	
29	Բարեկամության փողոց	
30	Բարեկամության փողոց 1-ին նրբանցք	
31	Բարեկամության փողոց 2-րդ նրբանցք	
32	Բարեկամության փողոց 3-րդ նրբանցք	
33	Բարեկամության փողոց 4-րդ նրբանցք	
34	Բարեկամության փողոց 4-րդ նրբանցք 1-ին փակուղի	
35	Եկեղեցու փողոց	
36	Լուսավորության փողոց	
37	Լուսավորության փողոց 1-ին նրբանցք	
38	Լուսավորության փողոց 2-րդ նրբանցք	
39	Լուսավորության փողոց 1-ին փակուղի	
40	Լուսավորության փողոց 2-րդ փակուղի	
41	Լուսավորության փողոց 3-րդ փակուղի	

42	Լուսավորության փողոց 4-րդ փակուղի	
43	Լուսավորության փողոց 5-րդ փակուղի	
44	Լուսավորության փողոց 6-րդ փակուղի	
45	Հատիսի փողոց	
46	Հատիսի փողոց 1-ին նրբանցք	
47	Հատիսի փողոց 2-րդ նրբանցք	
48	Հատիսի փողոց 1-ին փակուղի	
49	Հատիսի փողոց 2-րդ փակուղի	
50	Հատիսի փողոց 3-րդ փակուղի	
51	Մասիսի փողոց	
52	Մասիսի փողոց 1-ին փակուղի	
53	Շինարարների փողոց	
54	Շինարարների փողոց 1-ին փակուղի	
55	Ազատության փողոց 54-ից մինչև 162-րդ հասցեներ	
56	Այգեգործական թաղամասեր	
57	1-ին փողոց	Չորաքշաբթի և շաբաթ
58	2-րդ փողոց	
59	3-րդ փողոց	
60	4-րդ փողոց	
61	5-րդ փողոց	
62	6-րդ փողոց	
63	6-րդ փողոց 1-ին նրբանցք	
64	Ազատության փողոց 1-ից մինչև 52-րդ հասցեներ	
65	Ազատության փողոց 1-ին նրբանցք	
66	Ազատության փողոց 2-րդ նրբանցք	
67	Ազատության փողոց 3-րդ նրբանցք	
68	Ազատության փողոց 4-րդ նրբանցք	
69	Ազատության փողոց 5-րդ նրբանցք	
70	Ազատության փողոց 6-րդ նրբանցք	
71	Ազատության փողոց 7-րդ նրբանցք	
72	Ազատության փողոց 8-րդ նրբանցք	
73	Ազատության փողոց 8-րդ նրբանցք 1-ին փակուղի	
74	Ազատության փողոց 9-րդ նրբանցք	
75	Ազատության փողոց 10-րդ նրբանցք	
76	Բանակի փողոց	
77	Բանակի փողոց 2-րդ փակուղի	
78	Երիտասարդության փողոց	
79	Հաղթանակի փողոց	
80	Հաղթանակի փողոց 1-ին նրբանցք	
81	Ձորափի փողոց	
82	Ձորափի փողոց 2-րդ փակուղի	
83	Այգեգործական թաղամասեր	

Համայնք Ջրվեժ, գյուղ Ջովք		
1	1-ին փողոց	Երկուշաբթի և հինգշաբթի
2	1-ին փողոց 1-ին փակուղի	
3	1-ին փողոց 2-րդ փակուղի	
4	1-ին փողոց 3-րդ փակուղի	
5	1-ին փողոց 3-րդ նրբանցք	
6	2-րդ փողոց	
7	2-րդ փողոց 1-ին փակուղի	
8	2-րդ փողոց 2-րդ փակուղի	
9	3-րդ փողոց	
10	3-րդ փողոց 1-ին փակուղի	
11	3-րդ փողոց 2-րդ փակուղի	
12	3-րդ փողոց 3-րդ փակուղի.	
13	3-րդ փողոց 1-ին նրբանցք	
14	4-րդ փողոց	
15	4-րդ փողոց 1-ին փակուղի	
16	4-րդ փողոց 2-րդ փակուղի	
17	4-րդ փողոց 1-ին նրբանցք	
18	5-րդ փողոց	
19	5-րդ փողոց 1-ին փակուղի	
20	5-րդ փողոց 1-ին նրբանցք	
21	6-րդ փողոց	
22	6-րդ փողոց 1-ին նրբանցք	
23	6-րդ փողոց 2-րդ նրբանցք	
24	7-րդ փողոց	
25	7-րդ փողոց 1-ին նրբանցք	
26	7-րդ փողոց 2-րդ նրբանցք.	
27	7-րդ փողոց 3-րդ նրբանցք	
28	8-րդ փողոց	
29	9-րդ փողոց	
30	9-րդ փողոց 1-ին փակուղի	
31	10-րդ փողոց	
32	10-րդ փողոց 1-ին փակուղի	
33	11-րդ փողոց	
34	12-րդ փողոց	
35	13-րդ փողոց	
36	14-րդ փողոց	
37	Գլխավոր խճուղի	
38	Գլխավոր խճուղի 1-ին փակուղի	
39	Գերեզմանատուն	

9. Աղբի հեռացման ժամային գրաֆիկը ըստ փողոցների և տարածքների կազմվում է «ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ի կողմից, համաձայնեցվում է համայնքի ղեկավարի հետ և իրազեկվում է բնակչությանը:

10. Աղբի տեղափոխումը կատարվում է աղբաթափման համար սահմանված Ջրվեժ համայնքի վարչական տարածքում գտնվող աղբավայր՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

Ս Խ Ե Մ Ա
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵՅԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ

1. Ջրվեժ համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, պուրակների, հուշարձանների, հրապարակների, բակերի, մայթերի, կամուրջների, սիզամարգերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի ջրում-վացումը, փողոցների, կամուրջների և մայթերի՝ ծյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը:

2. Սանիտարական մաքրման աշխատանքները, կապված տարվա եղանակների հետ, իրենց բնույթով և խնդիրներով տարբեր են, այն բնութագրվում է ամառային և ձմեռային մաքրմամբ:

3. Ամառային մաքրումն իր մեջ ընդգրկում է մաքրման ձեռքի աշխատանքի և մեքենայացված մաքրման տեխնոլոգիաները:

4. Հավաքարարների միջոցով իրականացվող մաքրման ձեռքի աշխատանքի հիմնական նպատակն է՝ սահմանված նորմերին համապատասխան ապահովելու ընդհանուր օգտագործման տարածքները աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից մաքրումը:

5. Հավաքարարների միջոցով սիզամարգերից, ասֆալտապատ և ոչ ասֆալտապատ փողոցներում մաքրումը կատարել ձեռքով մաքրման միջոցով, մաքրվող տարածքներից աղբը հավաքելով կույտերի տեսքով՝ փողոցներում այդ նպատակի համար հատկացված տեղերում:

6. Ասֆալտապատ այն փողոցներում, որոնք ունեն անձևատար առուներ, իրականացվում է առուների մաքրման աշխատանքներ:

7. Մեքենայացված մաքրման խնդիրն է ապահովել փողոցներից աղբի հեռացումը, անձրևատար առուների և փոսերի մաքրումը, փողոցների երթևեկելի մասի և անձրևատար առուների վացումը (ջրումը) հատուկ մեքենայի միջոցով՝ բարելավելու միկրոկլիման և նվազեցնել օդի աղտոտվածության աստիճանը:

8. Ասֆալտապատ փողոցների վացումը և գրունտային փոցողների ջրումը կատարել ջրող-վացող մեքենայի միջոցով՝ ասֆալտապատ ծածկույթի դեպքում՝ 3 օրը մեկ անգամ, ոչ ասֆալտապատի դեպքում՝ 12 օրը մեկ անգամ (ըստ անհրաժեշտության):

9. Ձմեռային մաքրումն իր մեջ ընդգրկում է փողոցների, մայթերի, հրապարակների մաքրումը ծյունից, պայքար փողոցների սառցակալման դեմ, սառցակույտերի մաքրումը և հեռացումը (ըստ անհրաժեշտության): Բացի ծյունից, ձմեռային մաքրման դեպքում ապահովվում է փողոցների, մայթերի ու հրապարակների մաքրումը (աղբի մաքրումը և հավաքումը) ձնատեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

10. Համայնքում սանիտարական մաքրման աշխատանքների ժամանակացույցը ըստ փողոցների և տարածքների կազմվում է «ԶՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ի կողմից, համաձայնեցվում է համայնքի ղեկավարի հետ և իրազեկվում է բնակչությանը:

11. Սանիտարական մաքրման ենթակա փողոցները, տարածքները, աշխատանքների ծավալները Զրվեժ համայնքում հետևյալն են՝

h/h	Մաքրվող տարածքների, փողոցների անվանումը	Ասֆալտապատ		Ոչ ասֆալտապատ		Ընդամենը	
		երկարությունը մետր	տարածքը քառ.մետր	երկարությունը մետր	տարածքը քառ.մետր	երկարությունը մետր	տարածքը քառ.մետր
1	Մելքոնյան փողոց	990	7100		0	990	7100
2	Մելքոնյան փողոց 2-րդ նրբանցք	167	1155		0	167	1155
3	Մելքոնյան փողոց 1-ին նրբանցք	154	960		0	154	960
4	Մելքոնյան փողոց 1-ին փակուղի	72	391		0	72	391
5	Մելքոնյան փողոց 2-րդ փակուղի	237	1945			237	1945
6	Մելքոնյան փողոց 2-րդ փակուղի			61	509	61	509
7	Մելքոնյան փողոց 3-րդ փակուղի	68	587		0	68	587
8	1-ին փողոց	706	4600		0	706	4600
9	1-ին փողոց 1-ին նրբանցք	104	608		0	104	608
10	1-ին փողոց 1-ին փակուղի	15	90			15	90
11	1-ին փողոց 1-ին փակուղի			44	180	44	180
12	1-ին փողոց 2-րդ փակուղի	15	90			15	90
13	1-ին փողոց 2-րդ փակուղի			62	298	62	298
14	1-ին փողոց 3-րդ փակուղի	15	90			15	90
15	1-ին փողոց 3-րդ փակուղի			81	398	81	398
16	1-ին փողոց 4-րդ փակուղի			94	379	94	379
17	2-րդ փողոց	567	3417			567	3417
18	2-րդ փողոց 1-ին փակուղի			103	639	103	639
19	2-րդ փողոց 1-ին փակուղի	25	150			25	150
20	3-րդ փողոց	468	2360		0	468	2360
21	4-րդ փողոց	263	1719			263	1719
22	5-րդ փողոց	588	3943			588	3943
23	6-րդ փողոց	1064	6590		0	1064	6590
24	6-րդ փողոց 1-ին նրբանցք	94	560		0	94	560
25	6-րդ փողոց 2-րդ նրբանցք	359	1800		0	359	1800
26	6-րդ փողոց 1-ին փակուղի	226	1021		0	226	1021
27	6-րդ փողոց 2-րդ փակուղի	86	510		0	86	510
28	7-րդ փողոց	281	1570			281	1570
29	8-րդ փողոց	340	2954			340	2954
30	8-րդ փողոց			146	1282	146	1282
31	8-րդ փողոց 1-ին նրբանցք	161	1084		0	161	1084
32	9-րդ փողոց	238	1260		0	238	1260
33	10-րդ փողոց	387	4314		0	387	4314
34	10-րդ փողոց 1-ին փակուղի	131	1147		0	131	1147
35	11-րդ փողոց	230	1260		0	230	1260
36	12-րդ փողոց	1003	9093		0	1003	9093
37	12-րդ փողոց 1-ին փակուղի		0	68	424	68	424
38	12-րդ փողոց 2-րդ փակուղի	445	2622		0	445	2622
39	12-րդ փողոց 3-րդ փակուղի	169	893			169	893
40	12-րդ փողոց 4-րդ փակուղի	410	2540			410	2540
41	13-րդ փողոց	690	4830			690	4830

42	13-րդ փողոց			147	1029	147	1029
43	13-րդ փողոց 1-ին փակուղի	31	146			31	146
44	13-րդ փողոց 1-ին փակուղի			150	1109	150	1109
45	14-րդ փողոց	148	1036			148	1036
46	14-րդ փողոց			269	2690	269	2690
47	14-րդ փողոց 1-ին փակուղի		0	80	587	80	587
48	15-րդ փողոց	128	918			128	918
49	15-րդ փողոց			215	1290	215	1290
50	16-րդ փողոց	161	1094			161	1094
51	17-րդ փողոց		0	196	1568	196	1568
52	18-րդ փողոց		0	334	2672	334	2672
53	19-րդ փողոց	437	3416	590	6388	1027	9804
54	20-րդ փողոց	770	3080			770	3080
55	20-րդ փողոց			113	644	113	644
56	21-րդ փողոց		0	536	5461	536	5461
57	22-րդ փողոց	281	2118		0	281	2118
58	23-րդ փողոց	285	1710		0	285	1710
59	24-րդ փողոց	222	2219	218	2280	440	4499
60	25-րդ փողոց	366	2494			366	2494
61	26-րդ փողոց	362	2174	81	810	443	2984
62	27-րդ փողոց	305	2132	150	1965	455	4097
63	28-րդ փողոց	290	2068			290	2068
64	29-րդ փողոց		0	288	2693	288	2693
65	30-րդ փողոց		0	280	2922	280	2922
66	31-րդ փողոց		0	237	2469	237	2469
67	32-րդ փողոց		0	169	1656	169	1656
68	34-րդ փողոց	60	360			60	360
69	40-րդ փողոց	100	800			100	800
70	40-րդ փողոց			1097	11380	1097	11380
71	41-րդ փողոց 1-ին նրբանցք	113	339			113	339
72	41-րդ փողոց 1-ին նրբանցք			317	1771	317	1771
73	41-րդ փողոց		0	931	7090	931	7090
74	42-րդ փողոց	483	3093			483	3093
75	42-րդ փողոց			417	4170	417	4170
76	43-րդ փողոց	275	1925			275	1925
77	43-րդ փողոց			574	4630	574	4630
78	44-րդ փողոց			1190	5360	1190	5360
79	45-րդ փողոց	223	1115			223	1115
80	45-րդ փողոց			983	9830	983	9830
81	49-րդ փողոց	534	3204		0	534	3204
82	50-րդ փողոց	482	2700			482	2700
83	50-րդ փողոց			440	4400	440	4400
84	Ձորաղբյուր գյուղ	3600	40000	7500	60000	11100	100000
85	Զովք գյուղ	1800	20000	5000	40000	6800	60000
86	Ջրվեժ-Գառնի մայրուղի		0	3000	9000	3000	9000
87	Ջրվեժից Նոր-Նորք փողոց		0	3700	11100	3700	11100
88	Ջրվեժից Ձորաղբյուր փողոց		0	870	5244	870	5244
89	Գերեզմանատներ		0	0	17075	0	17075
90	Այգեգործական զանգվածներ	760	3800			760	3800
91	Այգեգործական զանգվածներ			3100	15500	3100	15500
Ընդամենը		22984	175194	33831	248892	56815	424086

12. Համայնքի ասֆալտապատ փողոցների մայրերի և հրապարակների տարածքից մաքրման տակ ընդգրկված է 175 194 քառ.մետր, որից ձեռքով մաքրման տակ՝ $(3 \times 22\ 984)$ մ = 68 953 քառ.մետր, իսկ ոչ ասֆալտապատ տարածքներից մաքրման տակ ընդգրկված է 248 892 քառ.մետր (սանիտարական մաքրման ենթակա փողոցների, տարածքների վերաբերյալ տեղեկությունը ներկայացված է 11-րդ կետում):

13. Ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի ծավալները կազմում են՝

1) ասֆալտապատ ծածկույթ ունեցող փողոցների, հրապարակների մեկ քառ.մետր մակերեսից տարեկան գոյանում է մոտ 15 կգ ավելվածք,

2) ոչ ասֆալտապատ (գրունտային) տարածքների մեկ քառ.մետր մակերեսից գոյանում է մոտ 1,5 կգ:

14. Համայնքի մաքրվող տարածքից կգոյանա՝

1) $68\ 953 \times 0,015 = 1034,3 : 12 \times 9 = 775,7$ տոննա աղբ,

2) $248\ 892 \times 0,0015 = 373,34 : 12 \times 9 = 280,0$ տոննա աղբ:

3) Ընդամենը՝ 1055,7 տոննա աղբ, օրական ավելվածքը կկազմի $1055,7 \text{ տ} : 270 \text{ օր} = 3,91$ տոննա:

15. Ջրվեժ համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի տեղափոխումը իրականացնել աղբահանության համար օգտագործվող բեռնատար մեքենաների միջոցով՝ բարձրումն իրականացնելով ձեռքով և էքսկավատորով:

16. Աղբի տեղափոխումը կատարվում է աղբաթափման համար սահմանված Ջրվեժ համայնքի վարչական տարածքում գտնվող աղբավայր՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

17. Փողոցներից ձյան մաքրման աշխատանքները կատարել համապատասխան մասնագիտացված մեքենայի և էքսկավատորի միջոցով:

18. Ջրվեժ համայնքի երեք բնակավայրերում սանիտարական մաքրման ենթակա են պատմամշակութային հուշարձաններին հարող տարածքները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԿԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մարտի 2019 թվականի N 12-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ
ԿԱՌՈՒՅՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՇԱՐԺ
ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ սեփական նախաձեռնությամբ ընդունել որոշում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված անշարժ գույքը (հողամասը և շինությունները) օտարելու վերաբերյալ՝ նախապատվություն տալով կառույցն իրականացրած անձին:

2. Շինությունների նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ վճարները իրականացվում են շինությունները գնողի կողմից:

	կողմ (10)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄՅԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2019 թ. մարտի 15
գ. Զրվեժ



ՌՈՒԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԿԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեթ համայնք, Մեղրոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ. փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մարտի 2019 թվականի N 13-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն NN 1-3 հավելվածների, դուրս գրման ենթակա գույքի ցուցակը՝ համաձայն N 4 հավելվածի:

	կողմ (10)	դեմ (0)	ձեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄՅԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մարտի 15
գ. Զրվեթ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մարտի 2019 թվականի N 14-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ
ԾՐԱԳՐԻ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջով,
համայնքի ավագանին **որոշում է.**

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաշվետվությունը համայնքի
զարգացման հնգայա ծրագրի՝ 2018 թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ, համաձայն
հավելվածի:

	կողմ (10)	դեմ (0)	ծեռնպահ (0)
ԱՐԿԱԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ			
ԳԱՍՊԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ			
ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ			
ԳՐԻՇԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ			
ԶՀԱՐ ՍԱՄՍՈՆՅԱՆ			
ԷԼԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ			
ՀՈՒՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ			
ՆՎԵՐ ՂԱՀՐԱՄՅԱՆՅԱՆ			
ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հունվարի 15
գ. Զրվեժ



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ՝ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի 2018 թվականի բյուջեն նախատեսված էր 2017 թվականի նոյեմբերին խոշորացված՝ նոր ձևավորված երեք՝ Ջրվեժ, Ձորաղբյուր և Զովք բնակավայրերի առջև ծառացած սոցիալ- տնտեսական, կրթական, մշակութային, քաղաքաշինության և բնակարանային կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված խնդիրների բացահայտմանն ու դրանց լուծման ուղիների որոնմանը: Հաշվետու տարվա բյուջեի եկամուտների ճշտված՝ պլանային ցուցանիշը կատարվել է ամբողջությամբ՝ ապահովելով նախատեսված տարեկան աշխատանքային պլանի հիմնական ծրագրերի իրականացումը:

Նշված երեք բնակավայրերի առջև ծառացած խնդիրները բազմաթիվ են, բյուջետային միջոցները՝ սահմանափակ: Այդ պատճառով 2017 թվականին բոլոր բնակավայրերում կազմակերպվել և անց են կացվել 2018 թվականի բյուջեի և տարեկան աշխատանքային պլանի նախագծերի բաց քննարկումներ, որի արդյունքում նախատեսվել են նշված բնակավայրերում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման ուղղությունները, ֆինանսավորման չափը:

2018 թվականին համայնքապետարանի աշխատակազմը ապահովել է համայնքի բնակչությանը հանրային որակյալ ծառայությունների մատուցումը, համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը:

Ստորև հակիրճ ներկայացվում են այն ծրագրերը, որոնց իրականացման արդյունքում բավարարվել են առավել թվով շահառուների կարիքները: Նշված աշխատանքների կատարման հետևանքով բոլոր բնակավայրերում իրականացվել են տնտեսական, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանման աշխատանքներ, որի շահառուներն են հանդիսանում բոլոր բնակավայրերի բնակչության գերակշիռ մասը:

Հաշվետու՝ 2018 թվականին համայնքում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 149,513.0 հազ.դրամ, այդ թվում՝ իրականացվել են երեք ներդրումային ծրագիր.

Միջազգային GIZ կազմակերպության կողմից ֆինանսավորվել, կառուցվել և կահավորվել է բնակչության սպասարկման գրասենյակ Ջրվեժ գյուղում, ծախսերը կազմել են 7,413.0 հազ.դրամ:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համաֆինանսավորմամբ Ձորաղբյուր գյուղում իրականացվել են ջրհավաք սրահի վերանորոգման և ջրագծի կառուցման աշխատանքներ: Ծրագրի արժեքը կազմել է 43,395.3 հազ.դրամ: Հաշվետու տարում իրականացվել են 20,711.0 հազ.դրամի ծախսեր: Նշված ծրագրում պետական բյուջեից ներդրումը կազմում է 16,700.0 հազ.դրամ: Մնացած՝ 22,684.3 հազ.դրամի ծախսերն իրականացվելու են համայնքի բյուջեի սեփական միջոցների հաշվին 2019 թվականի առաջին եռամսյակում:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից համայնքի բյուջեից 8,000.0 հազ.դրամ համաֆինանսավորմամբ խորքային պոմպի նորոգման և ջրագծի կառուցման աշխատանքներ են իրականացվել նաև համայնքի Զովք բնակավայրում:

Ձորաղբյուր գյուղում իրականացվել է նաև պոմպակայանի վերանորոգման, ջրընդունիչ խցի վերակառուցման, պոմպակայանից արտաքին ջրամատակարարման ցանցի կառուցման (Φ225 x13.4 մմ, 71 գմ) և ջրահավաք սրահի վերակառուցման աշխատանքներ:

Համայնքում 140,000.0 հազ.դրամ ֆինանսական ներդրումներ են իրականացվել բացառապես համայնքի սեփական միջոցների հաշվին:

Ֆինանսական միջոցները բաշխվել են հետևյալ ոլորտների հիմնախնդիրների լուծման նպատակով՝ Համայնքի վարչական տարածքի ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում՝ հաշվետու տարում ծախսերը կազմել են 78,733.4 հազ.դրամ, ասֆալտապատվել և բարեկարգվել է 11601.7 քառ.մ ճանապարհ, նախորդ՝ 2017 թվականին այդ ոլորտի ծախսերը կազմել են 111,076.2 հազ.դրամ: Հաշվետու տարում տրանսպորտի ոլորտի ծախսերը ըստ բնակավայրերի ունի հետևյալ տեսքը. Ջրվեժ բնակավայրում 59,435.4 հազ.դրամ, Ձորաղբյուր բնակավայրում 12,008.5 հազ.դրամ, Զովք բնակավայրում՝ 7,289.5 հազ.դրամ:

Քաղաքաշինության, բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ծախսերը կազմել են 53,658.4 հազ.դրամ, այդ թվում՝ ջրամատակարարման համար ծախսերը կազմել են 27,182.8 հազ.դրամ, այդ թվում՝ 24,932.8 հազ.դրամը կազմում են Ձորաղբյուր բնակավայրի ջրամատակարարման հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծախսերը, 2017 թվականին այդ ոլորտի ծախսերը կազմել են 2,212.8 հազ.դրամ, որոնք իրականացվել են Ձորաղբյուր բնակավայրում:

Այս ոլորտում Ջրվեժ բնակավայրում ծախսեր չեն նախատեսվել և չեն իրականացվել, քանի որ բնակավայրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը հանձնվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանը, և դրանց սպասարկման և շահագործման ծախսերն իրականացվում են «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից:

Քաղաքաշինության, բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ծախսերի կազմում փողոցային լուսավորման համակարգերի կառուցման ծախսերը կազմում են 20,607.6 հազ. դրամ՝ նախորդ՝ 2017 թվականին իրականացված՝ 4,018.7 հազ.դրամի դիմաց: Հաշվետու տարում ծախսերն իրականացվել են Ջրվեժ և Զովք բնակավայրերում, այդ թվում՝ Ջրվեժում տեղադրվել են 23 հենասյուն և 32 լուսադիոդային լուսատու, Զովքում՝ 18 հատ լուսադիոդային լուսատու:

Ջրվեժ բնակավայրի 20 և 28 փողոցներում կառուցվել է փողոցային լուսավորման համակարգ տեղադրվել են 50 հատ լուսադիոդային լուսատուներ:

Համայնքի շրջակա միջավայրի պահպանության ոլորտում, այդ թվում՝ Ջրվեժ բնակավայրում իրականացվել են 5,839.1 հազ.դրամի ծախսեր ջրահեռացման համակարգի կառուցման նպատակով: Նախորդ՝ 2017 թվականին այս ոլորտում ծախսեր չեն իրականացվել: Հաշվետու տարում Ջրվեժ գյուղի 27-րդ և 34-րդ փողոցներում կառուցվել է համապատասխանաբար 127 գմ և 225 գմ կոյուղագիծ:

Հաշվետու տարում համայնքի վարչական տարածքում ամբողջ տարվա ընթացքում հաստատված ժամանակացույցին համապատասխան իրականացվել են բնակչությանն աղբահանության ծառայությունների մատուցման, համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրման և աղբի հեռացման ծառայությունները, որը կազմել է 74,823.9 հազ.դրամ՝ նախորդ 2017 թվականի 55,778.1 հազ.դրամի դիմաց: Դեռևս կան բնակիչներ, որոնք խուսափում են աղբահանության համար սահմանված վճարները վճարելուց, կուտակում են պարտավորություններ: Աշխատանքներ են տարվում այդ մարդկանց վճարման դաշտում ընդգրկելու և կուտակված պարտավորությունները մարելու նպատակով:

Առողջապահության ոլորտի ծախսերը կազմել են 360.0 հազ.դրամ: Դրամաշնորհ է հատկացվել Ջրվեժի ամբուլատորիային՝ կահույքի ձեռքբերման նպատակով:

Արդեն տարիներ շարունակ համայնքապետարանը մասնակցում է Հայաստան համահայկական հիմնադրամի դրամահավաքին, ինչպես նաև վճարում է համայնքների միությանն անդամակցության անդամավճար: Հաշվետու տարում 200.0 հազ.դրամ է հատկացվել Հայաստան հիմնադրամին, 60.0 հազ.դրամ՝ Գյումրին առանց տնակների հիմնադրամին, 103.5 հազ.դրամ փոխանցվել է համայնքների միությանը որպես անդամավճար:

Համայնքապետարանը աջակցում է նաև հայ առաքելական եկեղեցու գործունեությանը՝ նրա երիտասարդաց թևի կազմակերպած միջոցառումներին հատկացնելով որոշակի դրամական օժանդակություն: Հաշվետու տարում այդ գումարը կազմել է 250.0 հազ.դրամ, նախորդ՝ 2017 թվականին այդ ծախսերը կազմել են 200.0 հազ.դրամ:

Այդ գումարներով նախապատրաստվել են ամանօրյա փաթեթ-նվերներ, որոնք սբ. Ծննդյան օրվա միջոցառման ժամանակ տրվել են երեխաներին:

Կրթության ոլորտի ծախսերը կազմել են 42,707.8 հազ.դրամ:

Հաշվետու տարում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցման համար ծախսերը կազմել են 21,195.3 հազ.դրամ, նախորդ՝ 2017 թվականի 17,530.0 հազ.դրամի դիմաց: Ծախսերն ապահովել են

Ձորաղբյուր բնակավայրի ավելի քան 60՝ մինչև վեց տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը:

Հաշվետու տարում միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը կազմել են 2,099.7 հազ.դրամ, այդ թվում՝ 909.7 հազ.դրամ կազմել են տարիներ ի վեր ավանդույթ դարձած դպրոցների առաջին դասարանի սաներին գրենական պարագաներով ապահովումը: Այս ծախսերը նախորդ՝ 2017 թվականին կազմել են 769.9 հազ.դրամ:

Այս ոլորտում իրականացվել են նաև 1,190.0 հազ.դրամի ծախսեր: Զուլքի միջնակարգ դպրոցի տանիքի հիմնանորոգման, ինչպես նաև տարրական դասարանների սաների սան. հանգույցների ընթացիկ նորոգման նպատակով դպրոցին հատկացվել է դրամաշնորհ:

Համայնքի սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը կազմել են 1,560 հազ.դրամ: Նախորդ՝ 2017 թվականին այս ոլորտի ծախսերը կազմել են 2,724.0 հազ.դրամ: Հաշվետու տարում սոցիալական հատուկ արտոնությունների մասով ծախսերը՝ ՀՄՊ-ի մասնակիցներին, արցախյան ազատամարտի զոհերի ընտանիքներին հատկացվող նպաստները կազմել են 480.0 հազ.դրամ, կամ ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 16 ընտանիքների՝ 2017 թվականի 1,624.0 հազ.դրամի դիմաց, ընտանիքի անդամներ և զավակներ խմբի ծախսերը՝ սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերվող աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են 1,050.0 հազ.դրամ, կամ աջակցություն է ցուցաբերվել համայնքի 35 ընտանիքների: Նախորդ՝ 2017 թվականին այդ ծախսերը կազմել են 980.0 հազ.դրամ:

Ստորև ներկայացվում է 2018 թվականի ՏԱՊ-ի ծախսերի կատարողականը ըստ ծրագրերի, ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը.

Համայնքի 2018 թ. ՏԱՊ-ի ծախսերի կատարողականը՝ ըստ ծրագրերի

Ցուցանիշներ	2018թ. ՏԱՊ -ի և տարեկան բյուջեի ճշգրտված պլանի (հազ. դրամ)	2018թ.ՏԱՊ -ի և տարեկան բյուջեի փաստացի (հազ. դրամ)	2018թ. ՏԱՊ-ի կատարողական, %
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ			
Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ			
Ծրագիր 1.Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում,	102,338.70	84,933.90	83 %
Ծրագիր 2.Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	5,998.80	3,707.70	61,8 %
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
Ծրագիր 1.Պաշտպանության կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացում	830.00	0	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
Ծրագիր 1.Փրկարար ծառայությունների իրականացում	1,630.00	0	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Ծրագիր 1.Լուսավորման համակարգերի կառուցում	27,942.00	23,007.6	82,3 %
Ծրագիր 2.Լուսավորման համակարգերի ընթացիկ սպասարկում	17,282.10	14,577.5	84,3 %
Ծրագիր 3. Ջրագծի և խորքային հորի կառուցում, պոմպի մոնտաժում	73,904.6	43,882.8	59,4 %
Ծրագիր 4. Ջրագծերի ընթացիկ նորոգում և սպասարկում	27,086.0	24,117.5	89 %

Ծրագիր 5. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	6,975.0	3,468.0	49,7 %
Ոլորտ 5. Հողօգտագործում			
Ոլորտ 6. Տրանսպորտ			
Ծրագիր 1. Ջրվեժ համայնքի փողոցների բարեկարգում և կառուցում	62,039.9	61,521.9	99,2 %
Ծրագիր 2. Համայնքի փողոցների ընթացիկ նորոգում և սպասարկում	18,494.0	17,211.56	93,1 %
Ծրագիր 3. Տրասպորտի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	4,520.0	3,020.0	66,8 %
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
Ոլորտ 8. Կրթություն			
Ծրագիր 1. Նախադպրոցական կրթական հաստատության ծառայության մատուցման ապահովում	22,145.8	21,195.3	96 %
Ծրագիր 2. Արտադպրոցական դաստիարակության ապահովում	20,157.2	19,412.7	96,3 %
Ծրագիր 3. Զուլքի միջնակարգ դպրոցին դրամաշնորհի հատկացում	1,700.0	1,190.0	70 %
Ծրագիր 4. Առաջին դասարանցիների համար գրենական նյութերի ձեռքբերում	950.00	909.74	96 %
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
Ծրագիր 1. Համայնքում մշակութային ծառայությունների կազմակերպում	3,574.0	933.4	26,1 %
Ծրագիր 2. Տեղեկատվական ծառայությունների մատուցման ապահովում	470.0	127.5	27,1 %
Ծրագիր 3. Հասարակական և կրոնական ծառայությունների ծախսեր	791.00	613.50	77,5 %
Ոլորտ 10. Առողջապահություն			
Ծրագիր 1. Ջրվեժ համայնքի բուժ. ամբուլատորիաներին դրամաշնորհ՝ գույքի ձեռքբերման և էներգետիկ ծախսերի փոխհատուցման նպատակով	1400.00	360.00	26 %
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
Ծրագիր 1. Հանգստի և սպորտի ծառայություններ	250.00	0.00	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Ծրագիր 1. Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին	3870.00	1560.00	40,3 %
Ոլորտ 13. Անասնաբուժություն և բուսասանիտարիա			
Ոլորտ 14. Շրջակա միջավայրի պահպանություն			
Ծրագիր 1. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	83267.10	74,823.9	90 %
Ծրագիր 2. Ջրահեռացման համակարգի կառուցում	5,933.0	5,839.1	98,4 %
Ծրագիր 3. Թափառող կենդանիների վնասագերծման աշխատանքներ	1,000.0	0.00	-
Ոլորտ 15. Զբոսաշրջություն			
Ոլորտ 16. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			

Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը

Ստորև ներկայացվում է ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը:

Համայնքի 2018թ. ՏԱՊ-ում ներառված ծրագրի արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը

Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ					
Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքի աշխատակազմի աշխատողներ	30	27		
Ելքային (քանակական)	ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում (%-ով)	5	4	-1	
Ելքային (որակական)	Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, %	5	5		
Ելքային (ժամկետայնության)	Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, օր	4	4		
Վերջնական արդյունքի	Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը,	լավ	լավ		
Ծախսեր, հազ.դրամ	102,338.7	102,338.7	84933.9	17,404.8	

Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ					
Ծրագիր 2. Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Մասնագիտական վերապատրաստում անցած աշխատակիցների թիվը	12	12		

Ելքային (քանակական)	Աշխատակազմում կիրառվող համակարգչային տեխնիկայի թիվը	50	70		Համայնքապետարանին տրամադրվել են համակարգիչներ GIZ-ի կողմից
Ելքային (որակական)	Աշխատակազմի կառուցվածքի, կանոնադրության, աշխատակարգերի և առկա կառավարման բարելավված համակարգերի առկայություն	այո	այո		
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1	1		
Վերջնական արդյունքի	Աշխատակազմի կառավարման համակարգերի վիճակը, աշխատակիցների հմտությունները և մասնագիտական կարողությունները	գերազանց	լավ		
Ծախսեր, հազ. դրամ	5,998.8	5,998.8	3,707.70	2,290.3	

Ոլորտ 2. Պաշտպանություն					
Ծրագիր 1. Պաշտպանության կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը	այո	այո		
Ելքային (քանակական)	Աշխատակազմում զորակոչի հարցերով զբաղվող աշխատակիցների թիվը	2	2		
Ելքային (որակական)	Զորակոչիկների բավարարվածությունը մատուցվող ծառայություններից	Լավ	Լավ		
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1	1		
Վերջնական արդյունքի	Զորակոչիկների ծնողների բավարարվածությունը համայնքի կողմից իրականացված աջակցության միջոցառումներից (հարցումների հիման վրա)	Շատ լավ	լավ		

Ծախսեր, հազ. դրամ	830.0	830.0	-		
-------------------	-------	-------	---	--	--

Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում					
Ծրագիր 1. Փրկարար ծառայությունների իրականացում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու պատրաստվածության մակարդակը	Ավելի շատ լավ, քան վատ	Ավելի շատ լավ, քան վատ		
Ելքային (քանակական)	Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության բնագավառում համայնքի ՔՊ մարմինների հմտությունների կատարելագործման նպատակով անցկացված վարժանքների թիվը	2	-		Համայնքում 2018 թվականի ընթացքում վարժանքներ չեն անցկացվել:
Ելքային (որակական)	Արտակարգ իրավիճակներում բնակչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման պատրաստվածության և իրազեկվածության մակարդակը	Բավարար	Բավարար		
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, տարի	1	1		
Վերջնական արդյունքի	Փրկարար ծառայությունների դասընթացների անցկացմանը բնակիչների մասնակցության աստիճանը, %	30	-		Համայնքում 2018 թվականի ընթացքում փրկարար ծառայությունների դասընթացներ չեն անցկացվել:
Ծախսեր, հազ. դրամ	1,630.0	1,630.0	-		

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ծրագիր 1. Ջրվեժ համայնքում լուսավորության ցանցի ընդլայնում և ընթացիկ սպասարկում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Գիշերային լուսավորությամբ ապահովված փողոցների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, %	26	26		
Ելքային (քանակական)	Փողոցային արտաքին լուսավորության համակարգի երկարությունը, կմ	34.116	34.116		
Ելքային (որակական)	Երթևեկության ավտանգության մակարդակի բարձրացում	այո	այո		
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման ժամկետը, ամիս	1	1		
Վերջնական արդյունքի	Էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքների մակերեսի տեսակարար կշիռը լուսավորվող տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, %	25	25		
Ծախսեր, հազ. դրամ	45224.1	45224.1	37,585.1	7,639.0	

Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ծրագիր 2. Ջրագծերի կառուցում, ընթացիկ նորոգում և սպասարկում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Բնակիչների բավարարվածությունը խմելու ջրի մատուցման ծառայությունների որակից, %	60	60		
Ելքային (քանակական)	Ջրագծից օգտվող բնակիչների թիվը	350	350		
Ելքային (որակական)	Բնակիչների կարծիքը ջրագծերի կառուցման վերաբերյալ	Շատ լավ	լավ		
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրականացման	3	3		

	Ժամկետը, ամիս				
Վերջնական արդյունքի	Կառուցված ջրագիծ, գմ	71	71		
Ծախսեր, հազ. դրամ	100,990.6	100,990.6	68,000.3	32,990.3	
Ոլորտ 6. Տրանսպորտ					
Ծրագիր 1. Ներհամայնքային փողոցների կառուցում, բարեկարգում և սպասարկում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների մակերեսը ընդհանուրի մեջ, %	7	7		
Ելքային (քանակական)	Կառուցված և բարեկարգված ներքնակավայրային ճանապարհների մակերես, քառ. մ	12000	12000		
Ելքային (որակական)	Համայնքային ենթակայության ճանապարհների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը	լավ	լավ		
Ելքային (ժամկետայնության)	Աշխատանքների իրականացման տևողությունը, ամիս	1,5	1,5		
Վերջնական արդյունքի	Բարեկարգ ներքնակավայրային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	70	70		
Ծախսեր, հազ. դրամ	80,533.9	80,533.9	78,733.4	1,800.5	

Ոլորտ 8. Կրթություն					
Ծրագիր 1. Համայնքում նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Մատուցված նախադպրոցական կրթության ծառայության արժեքը մեկ երեխայի հաշվով, հազ.դրամ	31.03	31.03		
Ելքային (քանակական)	ՆՈՒՀ-եր հաճախող երեխաների խմբերի թիվը	2	2		
Ելքային (որակական)	Ծնողների կարծիքը մատուցվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների	լավ	լավ		

	կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ՝ շատ վատ, վատ, բավարար, լավ, գերազանց				
Ելքային (ժամկետայնության)	Նախադպրոցական կրթության ծառայության մատուցման օրերի թիվը շաբաթվա ընթացքում,	5	5		
Վերջնական արդյունքի	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին	90	90		
Ծախսեր, հազ. դրամ	22,145.8	22,145.8	21,195.3	950.5	

Ոլորտ 8. Կրթություն					
Ծրագիր 2. Համայնքում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում					
Արդյունքային ցուցանիշները		2018 թ., տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Մատուցված արտադպրոցական դաստիարակության հաստատության ծառայությունների արժեքը մեկ երեխայի հաշվով, դրամ	19702	19702		
Ելքային (քանակական)	Արտադպրոցական դաստիարակության հաստատություն հաճախող երեխաների թիվը	112	112		
